



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Քրիստոսի յարութեան ապացոյցները
Հոգ. Կեանք

Գ. Գ. Խ.

Սուրբ Հոգիին օրհնութեան աճումը
Աւագ Ուրբաթի խորհրդածութիւն
Աստուծոյ տանող ճամբան
Հոգաւորացի աչքեր
«Մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը»

Թարգ. Վեր. Յ. Եղիազարեան

Վազան Սահակեան

Ս. Գրական ուսումնասիրութիւն

Պետրոս Առաքեալ

Գ. Գ. Խաչիկեան

Կենսագրական

Կոմս Յինցէնտորֆ

X X X

Մանկանց սիւնակ

Յիսուսի սէրը
Հարցումներ Եւեղ գիրքէն

Մանուկներու բարեկամ մը

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերերը թէև ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնածերերն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխարդախ վկայութեան: Փանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհամներու համար, այլ ամենուն, ուստի Տշմարտութեան ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանումնութիւն մը, հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերերը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ կը տպուին Մարսէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է, **Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, ԲՐՕՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ Եւ Պատ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳԳԱԼԵԱՆ**

Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան գիրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա. նաաու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու զրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ հաւար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱՃՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 13 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԳԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԳԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
ԲՐՕՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆԻ, իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով. —

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Արժնեցի՛ր գումն
որ կը քանանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր Կանգնող մանկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

Թ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1955

ԹԻԻ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՑՈՅՑՆԵՐԸ

Բայց հիմա Քրիստոս մեռելներէն յարութիւն
առած է:
Ա. Կոր. ԺԵ. 20

Քրիստոսի յարութեան հաւատքին վրայ
կանգնած է եկեղեցին. եթէ տապալի այդ սիւնը,
կը քանդուի նաեւ քրիստոնէութեան ամբողջ
շէնքը: Քանզի Յիսուսի աստուածութիւնը, մեր
մեղքերու թողութիւնը Անոր քաւարար արեան
միջոցաւ եւ մեր յաւիտենական կեանքը՝ կա-
խում ունին միայն Անոր յարութենէն: Ահա՛
այս գիտակցութենէն մղուած՝ կը գրէ Պօղոս Կո-
րնթացոց, «Եթէ Քրիստոս յարութիւն առած
չէ, ուրեմն մեր քարոզութիւնը պարապ է, ու ձեր
հաւատքն ալ պարապ է... ու տակաւին ձեր մեղ-
քերուն մէջ էք, նոյնպէս Քրիստոսով ննջողներն
ալ կորսուած են» (Ա. Կոր. ԺԵ. 14, 17, 18): Դարձ-
եալ այդ գիտակցութենէն թելադրուած՝ Սատա-
նան եւ իր արքանեակները կը ջանան, առաք-
եալներու օրերէն սկսեալ մինչեւ հիմա կործա-
նել հաւատքը Յիսուսի յարութեան վրայ:

Սակայն գոհութիւն Աստուծոյ՝ անոնք չեն
յաջողած ու չպիտի յաջողին ալ իրենց այդ
նպատակին մէջ, քանզի այդ հաւատքին հիմը
անյողդողդ է: Քրիստոսի յարութիւնը հաստատ-
ուած է պատմական այնպիսի ապացոյցներով,
որոնք կարող են համոզել հաւատալու տրամա-
դիր եղող ոեւէ անկեղծ ու փնտռող միտք: Քա-
նի որ այս տարիներու մեր ժողովուրդին մէջ
ալ կը դանուին բազմաթիւ մարդիկ, որոնք կը
տարակուսին Քրիստոսի յարութեանը, ջանանք
պարզել այդ ապացոյցները, որքան որ մեր հա-
մեստ կարողութիւնը եւ «Բանբեր»ի էջերը մեզի
կը թուաւորեն:

1. Յիսուսի յարութեանը հաւատացած էին Ա.
նոր բոլոր աշակերտներն ալ, որոնք այդ մասին
միակ հեղինակաւոր անձերն էին: Անոնց այդ հա-
ւատքին նկատմամբ վկայած են թուղթերէն շա-
տեր: Օրինակի համար. Պետրոս կը գրէ իր ա-

ռաջին թղթոյն Ա. Յի մէջ, «Օրհնեալ է Աստ-
ուած... Որ... մեզ նորէն ծնաւ Յիսուս Քրիստո-
սի յարութիւն առնելովը»: Պօղոս կ'ըսէ (Աստ-
ուած) մեռելներէն յարուց մեր Տէր Յիսուսը,
Որ մե՛, յանցանքներուն համար մատնուեցաւ եւ
մեզ արդարացնելու համար յարութիւն առաւ»
(Հռով. Դ. 24, 25): «Քրիստոս մեռելներէն յարու-
թիւն առած է, ննջեցեալներուն առաջին պտու-
ղը» (Ա. Կոր. ԺԵ. 28): Երբայացոց թղթոյն հե-
ղինակին վկայութեամբ, «Խաղաղութեան Աստ-
ուածը... մեռելներէն յարուց մեր Տէր Յիսուսը»
(Եբր. ԺԳ. 20): Յովհաննէս առաքեալ ալ յարու-
թեանը կ'ականարկէ, երբ Յիսուս Քրիստոսը «մե-
ռելներուն Անդրանիկը» կը կոչէ, (Յայտ. Ա. 5):
Միայն թուղթերէն կրնայինք ասոնց վրայ ու-
րիշ շատ վկայութիւններ ալ աւելցնել, իսկ ե-
թէ դիմենք Աւետարաններու վերջին գլուխնե-
րուն եւ Գործք Առաքելոց, բազմաթիւ են այն
համարները, որոնք կը յայտնեն թէ Յիսուսի
բոլոր աշակերտներն ալ խորապէս համոզուած
են Անոր հրաշափառ յարութեան:

Անոնց այդ հաւատքը հիմնուած չէր կեղ-
ծիքի վրայ, ինչպէս քահանայապետներն ու ծե-
րերը ջանացին համոզել ժողովուրդը: (Մատթ.
ԻԸ. 11-15): Եթէ աշակերտները սրտանց հաւա-
տացած չըլլային Յիսուսի յարութեանը, եւ եթէ
իրենց բոլոր քարոզութիւններու եւ վկայութեանց
ետեւը գողութիւն մը, խարդախութիւն մը կե-
ցած ըլլար, Պետրոսը յանձն չպիտի առնէր չար-
չարութիւն, նոյնիսկ խլիճիւար խաչուիլ իր Տէրսը
համար. ոչ ալ հալածող Սօղոսը հալածուող Պօ-
ղոս մը ըլլալ եւ յարութեան վկայութեանը հա-
մար հինգ անգամ 40էն մէկ պակաս ծեծ ուտել,
երեք անգամ ձողկուիլ, մէկ անգամ քարկոծուիլ
եւ վերջապէս մարտիրոսանալ: Պատմութեան
մէջ բնաւ այդպիսի բան մը չէ տեսնուած կեղ-
ծիքի մը, սուտի մը ի հաշիւ մարդ ինքզինքը

տառապանքի ու մահուան չենթարկեր:

Ուստի անհիմն է այն տեսութիւնը թէ աշակերտները Քրիստոսի յարութիւնը կը քարոզէին՝ առանց համոզուած ըլլալու անոր իրականութեանը: Արդէն այժմ չկայ ոեւէ լուրջ գիտնական որ պնդէ այդ տեսութեան վրայ: Դիւայն թեթեւաբարոյ եւ պատմական ու հոգեբանական ըմբռնումէ զուրկ մարդիկն են որ կը տարակուսին առաքեալներու անկեղծութեանը: Ուրեմն այս մասին այսքանը բաւական համարելով զանք ուրիշ հարցի մը:

Շատեր, մասնաւորաբար արդիականները, կ'ըսեն թէ արդիականներու այդ համոզումը հաստատուն հիմ մը չունի. երեւակայութեան արտադրած տեսիլքի, մտքի յափշտակութեան վրայ հաստատուած է. անոնց տեսածը ոչ թէ յարուցեալ Քրիստոսն էր, հապա միայն ենթակայական պատկեր մը, միայն արտայայտութիւնն ու արտացոլումը իրենց անձնական խորհուրդներուն: Կարճ, անոնք յարուցեալ Յիսուս մը չպիտի տեսնէին, եթէ չհաւատային թէ Անիկա յարութիւն պիտի առնէր:

Սակայն այս տեսութիւնը չհամապատասխաներ իրողութեան: Շիտակ է, Յիսուս երբեմն պատկերաւոր, երբեմն ալ որոշ խօսքերով անոնց ըսած էր թէ Ինքը երբորդ օրը յարութիւն պիտի առնէր (Մատ. ԺԲ. 40, Յովհ. Բ. 18-22, Մատ. ԺԶ. 21, ԺԷ. 22), բայց անոնք ընդունած չէին այդ խօսքերը եւ երբէք չէին հաւատար Անոր յարութեանը: Ասոր ապացոյցն է անոնց մեծ վիշտն ու յուսալքումը յարութեան նախընթաց օրերուն մէջ. Պետրոս կ'ըսէրանայ Տէրը, քանզի կը խորհի թէ Անիկա լքուած է Աստուծաէ, Անոր համար այլեւս փառքի օրեր չպիտի գան: Կըզեովպաս եւ իր ընկերը մեծ յուզման, հոգեկան տագնապի մէջ էին, վասնզի կը կարծէին թէ իրենց ակնկալութիւնը ի դերե ելած է, իրենց վարդապետը մեռած է եւ չէ յաջողած Իսրայէլի ազատարարն ըլլալ (Ղուկ. ԻԴ. 13-21): Եթէ աշակերտները հաւատացած ըլլային թէ իրենց Տէրը յարութիւն պիտի առնէր՝ պատճառ չպիտի ունենային այսքան յոռետեսութեան:

Եւ ոչ ալ այնքան կասկածոտ դիրք պիտի բռնէին յարութեան առաջին լուրերուն, ինչպէս կը տեսնենք հետեւեալ պարագաներուն մէջ.— Էմմաուս գաղտնի աշակերտները իմացած են հրեշտակներու տուած աւետիսը, «Անիկա ողջ է», բայց կը մնան իրենց թերահաւատութեան մէջ: Թոժմասի կը պատմեն բոլոր աշակերտները «Տէրը տեսանք», սակայն ան կը պատասխանէ, «Եթէ Իր ձեռքերուն վրայ բեւեռներուն նշանը չը տեսնեմ, ու մատս բեւեռներուն տեղը չխոթեմ, եւ իմ ձեռքս Անոր կողմ չխոթեմ, չեմ հաւատար»: Այո՛, աշակերտներուն թերահաւատու-

թիւնը այն աստիճանին հասած էր, որ «կը կարծէին թէ ոգի մը կը տեսնեն», մինչդեռ իրենց մէջտեղ կայնողը Տէրն էր (Ղուկ. ԻԴ. 26, 27):

Այսպէս, կը տեսնենք թէ աշակերտները երբեք ենթակայ չէին դիւրին դիւրին հաւատալու Յիսուսի յարութեանը եւ խաբուելու երեւակայութեան ստեղծած պատկերներով. անոնք թերահաւատ, այո՛, իրապաշտ մարդիկ էին: Տէրը զիտէր անոնց հոգեկան այդ վիճակը, ուստի երեւցաւ ու խօսեցաւ անոնց կրկին ու կրկին. թելադրեց նոյնիսկ որ շօշափեն զԻնքը*:

Միմիայն այդ շօշափելի յայտնութեանց—եւ ոչ թէ մտքի յափշտակութեան կամ տեսիլքի—միջոցաւ յաջողեցաւ Տէրը կոտորի աշակերտաց անհաւատութիւնը եւ համոզել զանոնք թէ Ինքը յարութիւն առած է: Եւ այդ համոզումն էր որ հիմնովին փոխեց աշակերտներու արամադրութիւնն ու նկարագիրը: Յիսուսի եղբայրները բոլորովին յաղթահարուած՝ լքեցին իրենց անհաւատութիւնը (Բաղդ. Յովհ. Է. 5 եւ Գործ. Ա. 14): Իսկ 11 առաքեալները, որոնք դեռ քիչ առաջ ներքին ամենասոսկալի տագնապներու մէջ էին, դարձան քրիստոնէութեան առաջին քաջամարտիկ, խոնարհ ու անձեռնէր ախոյեանները: Աշակերտներու այս փոփոխութիւնը անկարելի է մեկնել՝ առանց ընդունելու Քրիստոսի յարութեան իրականութիւնը:

Այսպէս, աշակերտներու հաւատքը առաջին եւ զլիաւոր ապացոյցն է Քրիստոսի յարութեան իրականութեանը:

2. Քրիստոսի պարապ գերեզմանը: Իրականութիւն է որ Քրիստոսի մահուան երբորդ օրը Անոր գերեզմանը պարապ գտնուեցաւ: Եթէ Անոր դիակը գերեզմանին մէջ ըլլար, քահանայապետներն ու հրէից ձերերը պիտի կարենային զայն ժողովուրդին ցուցնել եւ առաքեալները պապանցեցնել իբր ստախոսներ: Անոնք չկրցան

* Յիսուսին յետոյ Քրիստոսի երեւումներուն նկատմամբ կարգաւ չորս Աւետարաններու վերջին գլուխները, Գործք Առաքելոց Առաջին գլուխը եւ մասնաւորապէս Ա. Կոր. ԺԵ. 1-8: Այս վերջինը շահեկան է այն տեսակէտով ալ որ նոյնիսկ արդիական նշանաւոր աստուածաբաններ—ինչպէս Հարնաք— կ'ընդունին թէ այս թուղթը գրուած է Պողոսէ եւ Յ. Տ. 58ին, Քրիստոսի մահէն 25 տարի յետոյ: Ահա հոգ է որ Պողոս կը գրէ թէ Յիսուս յարութեանէն ետեւ երեւցած է երկու անգամ բոլոր առաքեալներուն, մէկ անգամ Կեփոսի (Պետրոսի) եւ Յակոբոսի առանձին, մէկ անգամ իրեն եւ անգամ մըն ալ 500էն աւելի եղբայրներու միասին: Այս գրած տառերը դեռ կ'ապրէին Պետրոսը, Յակոբոսը եւ 500ին մէջէն շատեր: Ուստի ինչ համարձակութեամբ պիտի գրէր Պողոս այդ երեւումներուն նկատմամբ, եթէ Յիսուս իրականաբար յարութիւն առած ու այդ անձերուն երեւցած չըլլար: Կարելի՞ բան է որ 500 անձեր միասին եւ միեւնոյն տոն մտքի յափշտակութիւն ունենան:

այդպիսի բան մ'ընել, քանզի մէջտեղը դիակ չկար: Արդէն նախապէս ցուցուցինք թէ այդ պարագայութիւնը կարելի չէ բացատրել ըսելով «Աշակերտները զողջան դիակը երբ պահապանները կը քնանային»: Ուստի ուրիշ ելք չմնար, եթէ ոչ ընդունիլ թէ Յիսուս զօրութեամբ յարութիւն առաւ եւ ատով գոյացաւ պարապը:

(Շար.)

Գ. Գ. Խ.

ՀԱՊ. ԿԵՆՆԲ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՄԸ

Սուրբ Հոգիին օրէնքին հնազանդողներուն համար՝ փառաւոր եւ կատարեալ ազատութիւն մը եւ օրհնութեան ու զօրութեան աճում մը կայ: Եւ Անոր օրէնքը շնորհք է, քանզի Հոգիին օրէնքը Քրիստոս Յիսուսով եղած կեանքն է (Հռ. Ը, 2):

Այսօր մարդիկ կան զոր Աստուած կարող եղած է անցեալին մէջ զօրաւոր կերպով գործածել, սակայն ներկայիս մէկզի զրուած են. ոչ թէ կորսուած, այլ ծառայելու յարմարութիւնը չունենալուն համար մէկզի թողուած: Անոնց մերժելուն պատճառը ամօթալի անկում մը չէ, այլ ինքզինքնին Աստուծոյ սիրոյն մէջ Հպահելը: Ուրիշներ ալ կան, որոնց ծառայութիւնը թէպէտեւ մերժուած է Աստուծոյ, սակայն իրենք կը շարունակեն մեծ, բայց ապարդիւն ջանքերով գործերնին յառաջ տանիլ: Սամփոսի նման չեն գիտեր թէ Աստուծոյ գօրութիւնը իրենցմէ հեռացած է, ուրեմն դուրս կ'ելլեն եւ ինքզինքնին կը ցնցեն, սակայն փոփոխութիւն մը տեղի չունենար: Արդեօք ինչո՞ւ: Անոնք մերժած են կատարել հետեւալ 3 բաներէն մին կամ միւսը:

Մենք երբեք մեր գտնուած տեղը չենք մնար. կամ զօրութենէ զօրութիւն կ'երթանք, մինչև որ Աստուծոյ առջեւ երեւնանք, կամ թէ ետ կ'երթանք՝ հետզհետէ աւելի տկարանալով ու անգորդառնալով: Սակայն եթէ այդ երեք կէտերուն ուշադրութիւն ընենք, անպատճառ պիտի աճինք ու զօրանանք հոգեւորապէս:

Ա. Հնազանդութիւն: Պետրոս առաքեալ որ ժամանակին համարձակած էր նոյնիսկ իր օրհնեալ Վարդապետին, «Ոչ, Տէր, այդ բանը Քեզմէ հեռու ըլլայ» ըսել, Պէնտէկոստէին օրը Սր. Հոգիով լեցուելէն վերջ սորվեցաւ թէ հնազանդութեան ճամբան է օրհնութեան միակ ճամբան: Ինքն է որ կ'ըսէ թէ «Աստուած Սուրբ Հոգին Իրեն հնազանդողներուն կուտայ» (Գործ. Ե. 32): Նկատած էք թէ ինչպէս Տէրը մէկ վայրկեանի

մէջ երեք անգամ սէր եւ հնազանդութիւն բառերը միասին կը յիշէ եւ կը նկարագրէ անոնց անպայման յաջորդող օրհնութիւնը:

ա. «Եթէ Զիս կը սիրէք, Իմ պատուիրանքներս պահեցէք, եւ ալ Հօրը պիտի աղաչեմ, եւ ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ բնակի, Ճշմարտութեան Հոգին... որ ձեր քով կը բնակի եւ ձեր մէջ պիտի ըլլայ» (Յովհ. Ժ. 14-17):

բ. «Ան որ Իմ պատուէրներս կը բռնէ ու կը պահէ զանոնք, անիկա է Զիս սիրողը, եւ ան որ Զիս կը սիրէ, Իմ Հօրմէս պիտի սիրուի ու եւ զանիկա պիտի սիրեմ, եւ Ինքզինքս անոր պիտի յայտնեմ» (հմր. 21):

գ. «Եթէ մէկը Զիս կը սիրէ, Իմ խօսքս պիտի պահէ, ու Իմ Հայրս զանիկա պիտի սիրէ, եւ անոր պիտի զանք ու անոր քով օթեւան պիտի ընենք» (հմր. 13):

Ահա երեք թելերէ հիւսուած մետաքսեայ հիւանալի կապ մը որ դմեզ Սուրբ Երրորդութեան կը կապէ: Սիրով Իրեն հնազանդելով մասնակից կ'ըլլանք հետեւեալ երրեակ օրհնութեան:

1. Յաւիտեան մեզ հետ բնակող Սուրբ Հոգիին (հմր. 16):

2. Քրիստոսի մեզի յայտնուելուն (հմր. 24):

3. Հօրը մեզի յայտնուելուն եւ Հօրն ու Որդւոյն շարունակ մեզի հետ բնակելուն (հմր. 25):

Ասկէ աւելի ի՞նչ կ'ուզենք: Ոչ մէկ օրհնութիւն կարող է զայն գերազանցել: Եւ այս կերպով միայն կրնանք ապրիլ Հօրը փառաւոր շնորհքին գովութեանը համար (հմր. 12), ու Սր. Հոգիին փառքին գովութեանը համար (հմր. 14):

Ի՞նչ կոչում: Ի՞նչ առանձնաշնորհում անոնց որ Իրեն կը վստահին: Ուրեմն ի՞նչ մեծ ուրախութեամբ սերտելու ենք Աստուծոյ Սուրբ խօսքը: Ի՞նչ մեծ եռանդով քննելու ենք Անոր պատուիրանքները: Զօրութեամբ լեցուած քրիստոնեան մէկն է որուն հաճութիւնը Աստուծոյ օրէնքին մէջ է եւ զիշեր ու ցորեկ Անոր օրէնքին վրայ կը մտածէ (Սաղմ. Ա. 2): Զարմանալի չէ՞ որ Յիսուսի սէրը ճանչցող անհատ մը Անոր հընազանդելու ընկրկի:

«Քրիստոս մինչեւ մահուան հնազանդ եղաւ, ու ան ալ խաչին մահուանը: Ասոր համար Աստուած աւ զԱնիկա խիստ բարձրացուց», կ'ըսէ Պօղոս առաքեալ, երբ փիլիպպեցիներուն հնազանդիլ կը հրամայէ: Քրիստոսի աշխարհի վրայ անցուցած կեանքին հիմը հնազանդութիւնն էր եւ Անոր կեանքին նշանաբանն էր, «Ահա կուգամ ես... Գու կամքդ ընելու ով Աստուած» (Եբր. Ժ.

7): Մենք ալ Անոր շաւիղներուն հետեւելով հընազանդելու ենք: «Վասնզի Աստուած է որ ձեր մէջը կը ներգործէ կամենալը ու ընելը Իր հաճութեանը համար» (Փիլ. Բ. 13):

Առանց հնազանդութեան կարելի չէ որեւէ օրհնութիւն կամ զօրութիւն ընդունիլ: Հնազանդելու յօժար եւ պատրաստ գտնուելով՝ զօրութիւն կ'ստանանք, քանզի այն ժամանակ Աստուած կ'ըլլայ մեր մէջ գործողը, ու ոչ թէ «Այն ոգին» որ ապստամբութեան որդիներուն ներսիդին կը գործէ» (Եփես. Բ. 2): Քրիստոս Ինքզինքը միայն անոնց կը յայտնէ որ սիրով Իրեն կը հնազանդին: Ուրեմն քանի որ Սուրբ Հոգին ընդունեցինք, Անով քալենք ալ՝ ինքզինքնիս Աստուծոյ սիրոյն մէջ պահելով:

Սուրբ Ըլլալ կը նշանակէ Աստուծոյ հանդէպ հնազանդ գտնուիլ կեանքի բոլոր մանրամասնութեանց մէջ: Սուրբ Հոգին կ'ուզէ մեզ կառավարել ու մեզի առաջնորդել կեանքի մեծ կամ պզտիկ զէպքերու մէջէ: Անոր փափաքն է որոշել մեր ընտանեկան կեանքի բազմաթիւ մանրամասնութիւններն ու կարգադրել մեր առեւտրական կեանքի կնճռոտ պարագաները: Ըսեմ մեր ընկերային կեանքի հարցերը ու պատասխանել մեր սիրտերուն բաղձանքներուն: Երբոր Սուրբ Հոգին իրապէս տիրանայ մեր կեանքերուն՝ կատարեալ խաղաղութիւն եւ անգործութիւն կ'ըլլայ մեր բաժինը: Կը դադրինք զրգոտելէ, աճապարելէ եւ մտաւախելէ: Հանդարտութեամբ կը խօսինք ու կը գործենք: Մեր խօսքերը աւելի սակաւ, սակայն աւելի ազդեցիկ կ'ըլլան: Կարծես թէ պակաս գործ կը տեսնենք, բայց մեր տեսած գործը աւելի օգտակար կ'ըլլայ: Պիտի ջանանք «Հանդարտ կենալ» (Ա. Թես. Դ. 11): Փորձառու պիտի ըլլանք այն օրհնեալ ճշմարտութեան թէ, «Ան որ կը հաւատայ, պիտի չարտորայ»: «Հանդարտ կեցէք ու զիտցէք թէ Ես եմ Աստուած»: «Վասնզի Եհովա Տէրը, Իսրայէլի Սուրբը, այսպէս կ'ըսէ՝ Ձեր զօրութիւնը հանդարտութեամբ ու ապաւինութեամբ կ'ըլլայ» (Ես. Լ. 45): Ամենակարող Տէր Աստուածը մեզի հետ է եւ մեզի համար պիտի գործէ: Ասկէ աւելի վստահութիւն ներշնչող բան մը կրնա՞յ գտնուիլ: «Գիտենք որ ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ զԱստուած կը սիրեն» (Հռով. Ը. 28): Մարդուն մէկը որ ինքզինքը Աստուծոյ յանձնելով խաւարէն լոյսի փոխադրուած էր, ըսաւ, «Ես այսօր Աստուծոյ կամքը պիտի կատարեմ առանց վաղուան վրայ խորհելու»: Եւ տարիներ վերջը վկայեց թէ իր այդ պարզ

որոշումը անբացատրելի օրհնութեանց պատճառեղած էր իրեն:

Տը. Ու. Չէփմըն, ձէնէրալ Պուլթի ծանօթանալով ուղեց անոր յաջողութեան զաղտնիքը գիտնալ: «Քեզի պիտի ըսեմ կեանքիս զաղտնիքը», պատասխանեց Չօր. Պուլթի, «Աստուած յաջողեցաւ զիս ամբողջովին ձեռք ձգել: Ինծմէ աւելի խելացի եւ աւելի լաւ պատեհութիւններ ունեցող մարդիկ շատ եղած են, սակայն այն օրուընէ սկսեալ որ Հօնաոնի աղքատները իմ սրտիս վրայ առի ու Քրիստոս ինծի ցուցուց թէ Ինք ինչե՞ր կ'ընայ ընել անոնց համար՝ որոշեցի որ Ու. Պուլթի բոլորովին Աստուծոյն պիտի ըլլայ: Ու եթէ իմ գործիս մէջ որեւէ զօրութիւն կ'երևնայ, պատճառը այն է որ իմ սրտիս ամբողջ սէրը, իմ կամքիս ամբողջ ոյժը եւ իմ կեանքիս ամբողջ ազդեցութիւնը Աստուծոյ յանձնուած են»:

Թերեւս կը հարցնես, «Սուրբ Հոգին ինչպէ՞ս կ'առաջնորդէ, ինչպէ՞ս կը խօսի մեզի»: Անիկա կը խօսի մեզի մեր խղճին միջոցաւ, այլեւայլ մարդոց կեանքերովն ու շրթունքներովը, բայց մասնաւորապէս Սուրբ Գիրքին միջոցով: Եւ այս է զգոյշ գտնուելու երկրորդ կէտը Սբ. Հոգւոյն օրհնութիւնը մեր մէջ աճեցնելու համար:

ԱԽԱԳ ՈՒՐԲԱԹԻ ԽՈՐՀՐԴԱԾ ՈՒԹԻՒՒՆ

Իր խուզողներուն առջեւ մունջ կեցող մաքիի պէս. այնպէս իր բերանը չբացաւ:

Անհրաժեշտ էր ուրեմն որ երկինքը խաւարով հագուեցնող եւ շուշանին իր փառաւոր հագուստը տուող Աստուածը՝ օր մը ոչխարի պէս խուզուէր:

Այո, քանզի իմ հոգիս մերկ էր, կը մսէր՝ և անմիջական պէտքն ունէր վերարկուի մը: Նա տեսաւ այս կարօտը եւ զթաց իմ վրաս: Ուստի Իր փառքի զգեստէն մերկացաւ եւ իմ անօրէնութեան զգեստս Իր վրայ հագաւ: Թոյլ տուաւ խուզուիլ, որպէսզի Իր հագուստով ես տաքնամ եւ կարենամ առտուածային արդարութեան առջեւ ներկայանալ, իսպին վրայ Իր՝ ինձ համար ձեռք բերած արդարութիւնը զգեցած:

Սիրոյ ու շնորհքի ի՞նչ հրաշք է այս, եղբայրս ու քոյրս: Կարելի է որ դուն մինչեւ հիմա զԱյն արհամարհած ես: Բայց հիմա եկուր ու թոյլ տուր որ Նա քեզ հագուեցնէ արդարութեան զգեստով՝ զոր Իրեն շատ սուղի նստաւ: Վայրկեան մ'ալ մի դանդաղիր Անոր փառք մատուցանել այսքան զորովալի սիրոյ մը համար:

Խ Ա Չ Ը

Քանզի խաչին քարոզութիւնը
կորսուածներուն յիմարութիւն է,
բայց մեզի փրկուածներուն՝ Աս-
տուծոյ զօրութիւնն է:

Ա. Կորն. Ա. 18

Անխորտակելի կոթող մ'ես դուն, խաչ՝ համամարդկային ապստամբութեան,
Պիղծ մարմնացումը՝ լոյսին դէմ ցըցուող ոճրագործներու աղտոտ երազին:
Դուն՝ անհերքելի ապացոյցն ես սեւ, տիեզերական տխուր անկումին.
Եւ արդարութեան եւ ցեղիս խրդճին, անպարտըկելի խուժողութ կախադան:
Խաչ՝ երկնի վերելք: Դրժոխքի սահանք: Կեանքի եւ մահու վրճաբեկ ատեան:
Անկրշիռ մեղքի, անսահման ցաւի եւ դիւցազնութեան դու հըզօր լըծակ,
Արարածներու ձեռքով դարբնւած Արարչին սիրտը միտուող ո'վ նիզակ
Դուն, սրբագործուած նշան ես փառքի եւ անյաղթ սիրոյ եւ յաւերժացման:
Խաչ՝ դուն դարբերու մոայլ պատմութեան հայելին ես ջինջ, անկեղծ եւ մաքուր
Որ կարտացոլաս Անառակ Որդւոյն խօլ եւ մահապարտ վիճակը տխուր,
Եւ անոր վրայ հայրօրէն լացող Աստուծոյ պատուած սիրտը անձնատուր...
Դո՛ւն՝ անհունութեան եւ ժամանակին եզրերը կապող խորհուրդի հանգոյց,
Աստուծոյ Սիրոյն խորքին, բարձրութեան, լայնքին, երկայնքին անշեղ չափացոյց,
Քեզ վրսեմացնող Խաչեալին պէս միշտ՝ թէ՛ մատչելի ես, եւ թէ՛ անմատոյց...

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ԽԱՉՈՒԱԾՆԵՐԸ

Քրիստոսի հետ խաչը ելայ, եւ ալ
կենդանի եմ ոչ թէ ես, հապա Քրիս-
տոս կենդանի է իմ մէջս. բայց ես որ
հիմա մարմնովս կ'ապրիմ, Աստուծոյ
Որդւոյն հաւատքովը կ'ապրիմ, որ զիս
սիրէց ու իր անձը ինծի համար մատ-
նեց:

Դադ. Բ. 20

Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
եթէ ցորենին հատը հողին մէջ իյնա-
լով չմեռնի, ինք մինակ կը մնայ, ա-
պա եթէ մեռնի, շատ արդիւնք կը բե-
րէ:

Յովհ. ԺԲ. 24

Ողջո՛յն ձեզ, ո'վ «ես»ի գձուձ կեանքէն վեր՝
Մուժ բայց վսեմ խաչելութեան վազողներ.
Որ կ'երթաք լո՛ւռ, անվերապահ եւ յօժար
Յիսուսի հետ խաչուիլ մահով մը դժուար,
Որուն սկիզբն թէեւ դառն է եւ ըստոր՝
Բայց վախճանն ալ անհունօրէն փառաւոր՝
Ջի տաքնապի այդ վայրկեանն է որ ահա
Ձեզ կը կերտէ հերոսներ սուրբ եւ անմահ:

Ողջո՛յն ձեզ, ո'վ Գողգոթայի անձնըւէր
Խաչուած «ես»ով արհամարուած հերոսներ.

Որ վար կ'իջնէք ձեր «հին մարդը» անկենդան
Սուրբ վրէժով գերեզմանել յաւիտեան:
Օ՛հ, ես գիտեմ՝ այդ խուլ վիհին մէջ յաւէտ
Տարրալուծուող դուք ցորեններդ անհետ՝
Անպայման դուրս պիտի գաք զերդ ռահվիրա
Անոնց առջեւ որ քար դրրին ձեր վրայ:

Սպասեցէ՛ք, յաղթութեան ժամն է հիմա.
Վերածնունդի երկունքն արդէն կը հեւա՛յ...
(Բայց ի՛նչ հըրաշք, գետնաքարշ խեղճ

Թրթուրներ

Դարձան ազատ ոսկի թելով թիթեռներ):
Օ՛հ, ողջոյն ձեզ, ո'վ յարուցեալ հերոսներ,
Ձեզ կըսպասեն սեւ լաչակուած հոգիներ.
Տըւէք այդ խեղճ գերիներուն անարեւ՝
Ազատութեան սիրոյն հետ ոյժ, լոյս եւ թեւ:

Կենսաշարժար ձեր սալին վրայ լուսաշող՝
Մարդկութեան սբ. ազատութիւնը դարբնող
Ո'վ տիտաններ, ո'վ հերոսներ, ո'վ սուրբեր,
Ո'վ աննրկուն աստուածաշաղ կոթողներ:

Ձեր ետեւէն կը հառաչեն անդադար
Ամբոխը կոյր եւ մեղսակիր եւ խաւա՛ր:
Արդ օգնեցէք դիւցազնական հոգիով
Մինչեւ որ նա հասնի բարձունքն ապահով:

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՆՈՂ ՃԱՄԲԱՆ

1. ԿԱՐՕՏ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Մարդ մը աղօթածողովէ մը շատ ազդուելով՝ քարոզիչին մօտեցաւ ու ըսաւ, «Իմ ցաւերս ալ նման են ցաւերուն այն Ասորիներուն որոնք ըսին, Մենք լսած ենք որ Իսրայէլի տան թագաւորները ողորմած թագաւորներ են, հիմա մէջքերնիս քուրձեր ու գլուխնիս չուաններ դնենք եւ Իսրայէլի թագաւորին առջեւ ելլինք, գուցէ մեր անձերը ապրին: Ո՛հ, ես ալ ապրիլ կ'ուզեմ, վզիս բոլորտիքը չուան մը ունիմ, քանզի մահուան արժանի մեղաւոր մըն եմ, այն ատեն կըրնամ ապրիլ երբոր երկնային թագաւորը ինծի ողորմութիւն ցուցնէ»: Իրեն պատասխանուեցաւ, «Անիկա կ'ընէ, որովհետեւ Անոր ողորմութիւնը այնչափ մեծ է, որչափ ինքն անձամբ»: Մարդ պարտաւոր է՝ անձնարդարութեան չուանը իր վզին բոլորտիքը կապել ու ճշմարիտ ապաշխարութեան քուրձին մէջ մտնել. քանզի, Տէրը կը բարձրացնէ զանոնք, որոնք կը խոնարհին: «Աստուած բարձր եւ գերազանց է», ըսած է նշանաւոր Սուրբն Օգոստինոս, «Երբոր ինքզինքը կը բարձրացնես, քեզմէ կը հեռանայ, իսկ եթէ խոնարհիս քեզի կը մօտենայ»: Միայն խոնարհ եւ կոտորած սիրտ ունեցողները իրենց հօգիներուն փրկութեան համար կ'ունենան ճշմարիտ փափաք մը առ Աստուած: Տարիներ առաջ երկաթուղիի մը մէկ վակոնին մէջ տեսայ տիկին մը, որ բարձերու մէջ փաթթուած էր: Իր դիմացը նստած էր ամուսինը, որ իր հիւանդ տիկինը ուրիշ քաղաք մը կը տանէր օդափոխութեան, դարմանումի համար. երկուքն ալ կարօտ մը ունէին առ Աստուած իրենց սիրտերուն մէջ. ճամբորդութեան միջոցին հոգևոր գրութիւն մը ձեռքերնին անցնելով կը կարդային: Ընթերցմամբ հասկցած էին իրենց մեղաւոր ըլլալը եւ փրկութիւն կը փնտռէին: Իրենց քով գտնուելով կըրցայ դէպի Աստուած տանող ճամբան ցուցնել. ինչպէս որ Փիլիպպոս եթովպացի ներքինին ըրաւ, «Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ, մեր խաղաղութեան պատիժը Անոր վերայ եղաւ ու Անոր վերքերովը մենք բժշկուեցանք»: Ուր որ կարօտ կայ առ Աստուած, հոն մեղաւորը կը մօտենայ Փրկչին՝ Յիսուս Բրիտոսին, Որ ըսած է, «Այն ամէնը որ Հայրը Ինծի կուտայ, Ինծի պիտի գայ, ու ան որ Ինծի կուգայ, ընաւ դուրս պիտի չհանեմ» (Յովհ. 2. 37):

2. ՄԻՋՆՈՐԴ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՄԱՐԴՈՅ ՄԻՋԵՒ

Նշանաւոր բանաստեղծի մը հարցուեցաւ թէ «Ի՞նչ կը խորհի Բրիտոսի վրայով»: Պահ մը լուռ մնալէն վերջ իր նայուածքը գետին ուղղելով ըսաւ, «Կը տեսնէ՞ք այս ծաղիկը, ինչ որ է արեւը անոր համար, նոյնն է Բրիտոսս ինծի համար»: Անիկա անձամբ ըսած է, «Ես եմ ճամբան... մէկը չօրը քով չգար, եթէ ոչ Ինծմով»: Պօղոս առաքեալ կը վկայէ, «Մէկ Աստուած կայ ու մէկ Միջնորդ Աստուծոյ ու մարդոց միջեւ: Բրիտոսս Յիսուս մարդը»: Երբոր մէկը անմիջապէս կ'ըզգայ իր մեղաւոր ըլլալը, մօտ կուգայ մեղաւորաց Փրկչին: Բրիտոսս ճանչնալէն առաջ Պէտք է որ ճանչնանք մեր մեղքերու մեծութիւնը, անոնց վրայ լման լոյս ունենալու ենք: Խորհէ անգամ մը, Աստուած Ազամ մեղքի մը համար երկրաւոր դրախտէն վռնտեց, կը հաւատա՞ս որ զքեզ երկնաւոր դրախտին մէջ պիտի ընդունի, քանի որ հազարաւոր մեղքերով բեռնաւորուած ես: Ո՛չ, երկինքը անպատճառ մեր առջեւ պիտի գոցուի, եթէ Բրիտոսը չընդունինք: Ուրիշ մէկով փրկութիւն չկայ, վասնզի Անկէ զատ ուրիշ անուն մը չկայ երկինքի տակ, մարդոց մէջ տըրւած, որով կարող ըլլանք փրկուիլ»: Ան է որ իր կեանքը փրկագին տուաւ շատերու համար եւ ասոր համար ալ մեռաւ որպէսզի գմեղ Աստուծոյ առաջնորդէ:

Թարգ. (Վեր.) ՅՈՎՈՐ ԵՂԻԱՍԵԱՆ

Գաղալա

ԼՈՒՍԱՓԱՅԼ ԱԶՔԵՐ

1918ին Ճաքոնի մայրաքաղաքին՝ Թոքիոյ մէջ գլխատուեցաւ Թոքիչի Իշիի անունով ոճրագործ մը: 57 տարեկան էր: Բազմաթիւ աւագակութիւններու պատճառաւ իր կեանքի օրերուն զըրեթէ կէսը բանտի մէջ անցուցած էր: Իր մարդասպանական մի քանի արարքները զինքը վերջապէս կառափնատեղի առաջնորդեցին: Իր գըլխատուելէն քիչ առաջ անիկա հետեւեալը պատմած է իր բանտին մէջ:

Արդէն իբր պատանի գերի դարձած էր բազախաղի. երբ ատով դրամ կորսնցնէր, կը դիմէր գողութեան: Վերջապէս բանտարկուեցաւ՝ նախ միայն կարճ ժամանակի մը համար: Սակայն այս զինքը ուղղելու տեղ՝ աւելի զարգացուց գողութեան մէջ. բանտին մէջ տարիքոտ գողերու հետ շփման զաւով՝ անոնցմէ սորվեցաւ աւագակութեան պէսպիսի խորամանկութիւն:

ներն ու հնարքները: Հազիւ բանտէն արձակուած քիչ ետք աւագակութեան յանցանքով դարձեալ հոն առաջնորդուեցաւ: Եւ ատկէ վերջը իր կեանքը շղթայ մը եղաւ ոճրագործութեանց ու բանտարկութեանց, ու օրէ օր աւելի յանդուգն դարձան իր չարագործութիւնները, աւելի անսիրտ իր յարձակումները եւ աւելի անգութ ու կատաղի իր դիմադրութիւնը հանդէպ անոնց, որոնք սանձահարել կ'ուզէին իր վայրագ ցանկութիւնները: Այսպէս՝ անգամ մը ինքը դաշունահար գետին ձգեց ոստիկան մը որ գինք ձերբակալել կ'ուզէր: Ուրիշ ատիւն մը խեղդեց ծերունի այր մը ու իր կիներ, որոնք կ'աղաղակէին որ զըրացիները իրենց օգնութեան հասնին: Բանտին մէջ յարձակեցաւ բանտապահին վրայ, երբ անիկա գինքը կը յանդիմանէր. եւ միշտ կոխի մէջ էր իր բանտակիցներուն հետ, այնպէս որ գինքը բոլորովին առանձնացնել ստիպուեցան:

Իր հայրը գինեմով մըն էր և գութ չունէր իր որդւոյն համար, բայց մայրը կը սիրէր իր ոճրագործ գաւակը խանդակալթ սրտով: Սակայն ո'չ այս սէրը եւ ո'չ ալ իր պուտտայական կըրօնը չյաջողեցան սանձել թոքիջի Իշիիի գազանային բնազդները: Իր մեղքերն ու ոճրագործութիւնները իրենց խոր դրոշմը թողուցած էին անոր դիմագծին վրայ, որ ճշգրիտ արտայայտիչն էր անոր ներքին կեանքին:

Բայց անոր կեանքի վախճանէն քիչ առաջ այդ դիմագիծը եւ այդ աչքերը ստացան այնպիսի փայլ մը որ կը սքանչացնէր բոլոր գինքը ճանչցող ճարտիւցիները: Այդ եւ ուրիշ հեռակայ բանտին ստորագաս ու բարձր բոլոր պաշտօնեաները կ'այցելէին այդ մահուան դատապարտուած բանտարկեալը, անոր լուսաշող դէմքը տեսնելու համար եւ բանտի պուտտայական կրօնաւորները կը սիրէին ստէպ անոր հետ խօսակցիլ ու ակնապիշ նայիլ անոր ճառագայթարձակ աչքերուն մէջ:

Ինչ էր այս հանելուկին բանալին: Երկու ամերիկ. միսիոնարուհիներ օրմը այդ մահապարտ ոճրագործին բանտը գացած էին: Սիրալից խօսքերով անոր պատմած էին Յիսուսի վրայով, Բայց իրենց խօսքերը ռեւէ ներգործութիւն ունեցած չէին, քանզի անիկա իր միտքը չէր յոգնեցներ նոյնիսկ իր պուտտայական կրօնին խորհուրդներովը, ալ ո՛ւր կը մնար օտար կրօն մը: Սակայն միսիոնարուհիները՝ հակառակ իրենց անյաջողութեան բաժնուելէ առաջ բանտարկեալին քով ձգեցին Նոր Կտակարան մը: Բոլորովին առանձնութեան դատապարտուած բանտարկեա-

լին համար՝ անսպառ տանջանք էին առանձին ժամերը: Ուստի ձանձրոյթը փարատելու համար երբեմն կ'առնէր գիրքը, կը թերթատէր զայն և դարձեալ կը դնէր մէկդի: Սակայն եւ այնպէս իր ուշադրութիւնը հետզհետէ զրաւուցաւ Յիսուսի կեանքովը եւ Անոր հրէաներուն կողմէ կրած անիրաւութեամբը: Օր մըն ալ հանդիպեցաւ Խաչեալին սա խօսքին. — Հայր, ներէ առնոց, քանզի չեն գիտեր թէ ինչ կ'ընեն: Ինչ անիմանալի խօսք, չարչարուող մը, ծաղրուող մը, սիրալից ոգով կը միջնորդէ անոնց համար որոնք կը տանջեն իր մարմինն ու հոգին: Յիսուսի այդ խօսքը նիզակի մը նման մխուցաւ թոքիջի Իշիիի սիրտը. անիկա ըսաւ, «Ես ինչպէս» կը զայրանայի, կը կատաղէի, եթէ մէկը յանդգնէր միայն դաշիլ ինծի: Բայց այս խաչեալ Քրիստոսը ներում կը խնդրէ իր մահացու թշնամիներուն համար: Այս վսեմ ներողամբութեան վրայ մտածած ատեն կը քացուին ոճրագործին հոգւոյն աչքերը, ինչպէս 1900 տարիներ առաջ Յիսուսի խաչակից աւագակիները: Անիկա կը տեսնէ Յիսուսի ներքին վեհափառութիւնը եւ շուտով ապրումը կ'ունենայ թէ Նա աշխարհի եւ իր Փրկիչն է: Այդ վայրկեանէն ըսկըսեալ իր շրջապատին հանդէպ անոր ունեցած ատելութիւնն ու ոխը կը հալին, ինչպէս ձիւնը դարնանային արեգակին առջեւ, եւ խոյս կուտայ մահուան հանդէպ անոր ունեցած սարսափելի վախը: Անիկա ինքզինքը ծածկուած կը տեսնէ Յիսուսի մէջ, զՈր իրեն մօտ, շօշափելիօրէն մօտ կը զգայ: Յիսուսը այլեւս իր ամէն բանն է: Այդ ժամէն կը սկսի ուրախութիւն արտացոլալ այդ երբեմնի մարդասպանին զազրելի աչքերէն, այնպիսի լոյս մը, որ կը հրապուրէ ամէն մարդ եւ որուն լուրը կը տարածուի շատ հեռունները: Պուտտայական քահանայապետ մը կ'այցելէր զայն գրեթէ ամէն մէկ շաբաթ: Խօսակցութեան մը ատեն, երբ զգայուն կրօնաւորը փափկօրէն այս փոփոխութեան գաղտնիքին թափանցել կը փափաքէր, բանտարկեալը անոր իր Նոր Կտակարանը ցուցուց և ըսաւ, «Այս գրքին միջոցաւ գիտեմ թէ Յիսուս հոս այս խրջիկին մէջ է»: Անոր վրայ պուտտայական հեթանոս քահանան պատասխանեց, «Լաւ է այդպիսի հաւատք մը ունենալ, կը փափաքիմ որ հետզհետէ խորունկնաս անոր մէջ»:

Պուտտայական ուրիշ քահանայ մը, որ թոքիջի Իշիիի զխատման ատեն անոր քովն էր, ըսած է, «Կառափնատեղիին վրայ զխատուողներէն շատեր աներկիւղ կը նային մահուան ե-

բեսին, քանզի անոնք հաստատապէս վճռած են քաջի պէս մեռնելու եւ աշխարհի ծաղրանքին առարկայ չդառնալու: Սակայն Իշիի քաջասրբ-տութիւնը բոլորովին ուրիշ բան էր, անոր վրայ չէր նշմարուեր ամենափոքր բան մը իսկ, որով կարելի ըլլար ապացուցանել թէ անիկա կ'ուզէր քաջասիրտ երեւնալ՝ ատով ուրիշները հմայելու կամ անխուսափելիին համակերպելու զիտումով, հապա կը թուէր թէ ան ուրիշ բան մը չէր տեսներ, եթէ ոչ փառքը երկնային աշխարհին, որուն անիկա իր աչքերը ուղղած էր՝ իր մեղքերուն ծանր բեռը թօթափելէ յետոյ եւ որուն կը դիմէր նման մարդու մը, որ խորունկ կարօտով դէպի իր հայրենիքը կ'երթայ: Զինքը շրջապատող պաշտօնեաներէն չկար մէկը, որ զայն ա-կամայ չգնահատէր ու չյարգէր՝ տեսնելով անոր լուսափայլ աչքերը»:

Աստուծոյ շնորհքին այս մեծ գործը նկարագ-րող տեղեկութիւնը հասած է մեզի այն գրութիւն-ներուն միջոցաւ, զորս բանտարկեալը իր զըմբա-տումէն քիչ առաջ գրած է՝ իր բանտապահներէն մէկուն ստիպումովը: Ասոր վրայ մի քանի վկայութիւններ աւելցուցած են բանտապահնե-րը, Իշիի փաստաբանը եւ միսիոնարուհին, որ զայն յաճախ այցելելու արտօնուած էր:

«ՄԵՐ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉՈՎԸ»

...Որով աշխարհ ինծի իտալ է,

Գող. 2. 14

եւ ալ աշխարհի:

Խաչը ելած մէկը դատապարտուած կ'ըլլայ: Խաչեալ Քրիստոս աշխարհի կողմէ դատապարտ-ուած է: Ըստ օրինի յանցաւոր մը դատապար-տելէ առաջ, երբեմն նոյնիսկ միայն իբր ձեւա-կերպութիւն՝ անոր պաշտպան փաստաբան մը կուտան: Աշխարհ ալ Քրիստոսի դատաւարու-թիւնը ըրած ատեն Անոր պաշտպան դատաւոր մը տուած է յանձին Պիղատոսի: Անիկա շատ աշխատեցաւ չքննելուն ու Քրիստոսը հաշտեցը-նել, բայց ասիկա անկարելի էր եւ անկարելի ե-ղաւ: Վերջ ի վերջոյ աշխարհի դատաբանին առ-ջեւ Սատանային Յիսուսի համար տուած պաշտ-պան փաստաբանը Պիղատոս, պարտուած ըլլա-լով ձեռքերը լուաց: Աշխարհ յաղթանակեց: Աշ-խարհ կը պօռայ:—

«Ես խաւար եմ, իսկ այս Մարդը լոյս, ուս-տի կը դատապարտեմ զԱյն»:

«Ես վարէն եմ, դժոխքի ծոցէն, իմ հօրմէն Սա-տանայէն ծնած, իսկ այս Մարդը վերէն է, Հօ-

րը ծոցէն ծնած, ուրեմն կը դատապարտեմ զԱյն»:

«Ես մահ եմ, իսկ այդ Մարդը կեանք, ու-րեմն կը դատապարտեմ զԱյն»:

«Ես ատելութիւն եմ, իսկ այդ մարդը սէր, ուրեմն կը դատապարտեմ զԱյն»:

Խաչը ելած մէկը դատապարտուած է թէեւ, բայց կրնայ տակաւին մեռած չըլլալ, եւ խաչ-եալին առջեւ անոր թշնամին կ'ըսէ, «Իշիւ այդ խաչէն»: Վերջին և թերեւ ամենատոսկալի փոր-ձութիւնն էր այդ Քրիստոսի համար, եւ Քրիս-տոս ատոր յաղթեց... խաչին վրայ մեռնելով: Այո, խաչը ելլելուն նպատակն է մեռնիլ: Եթէ մէկը կամաւ խաչը ելած է, ինչո՞ւ ատկից վար պիտի իջնէ: Մեռնելու ուրիշ միջոցներ ալ կան որոնք անմիջապէս կ'ապանեն. օրինակ— հըրա-ցանազարկ ընել, կախաղան բարձրացնել, կա-ռափնատով կամ դահիճին ձեռքով զլուխը կըտ-րել, կամ ելեկտրական աթոռը նստեցնել: Բայց խաչը մէկէն ի մէկ չի մեռցներ: Կը պատահէր որ խաչին վրայ մարդիկ երեք-չորս, մինչեւ եօ-թը օր չարձարուէին յետոյ կը մեռնէին: Աշ-խարհ որ քեզ դատապարտեց ու խաչը հանեց, ատեն ատեն կուգայ, ու եթէ տեսնէ թէ տակա-ւին չես մեռած՝ ինչպէս Քրիստոսի ըսաւ քեզի ալ կ'ըսէ, «Իշիւ այդ խաչէն, իշիւ այդ խաչէն»:

«Մե'ղք քեզի», կ'ըսէ աշխարհ, «դուն իմաս-տուն ես, եկուր եւ այդ իմաստութիւնդ գովենք» եկուր, եւ այդ խաչէն վար իջիր: Խաչեալ քը-րիստոսեան թող պատասխանէ, «Ես յիմար եմ Քրիստոսի համար»:

«Մե'ղք քեզի», կ'ըսէ աշխարհ, «դուն չե՞ս ուզեր դրամ շահիլ, իսանութ մը բացած ես և կըր-նաս շատ դրամ շահիլ, միայն եթէ խաչէն վար իջնես»: Խաչեալ քրիստոսեան պէտք է պատաս-խանէ, «Իմ գանձս Քրիստոս է, աշխարհի ոսկին ինձ համար աղտեղութիւն է, ուտելու հաց և հագ-նելու հանդերձ ունենալով կը գոհանամ»:

«Մե'ղք քեզի», կ'ըսէ աշխարհ, «գեղեցիկ օրիորդ մըն ես, եւ կրնաս շատ պատիւ եւ հա-մարում ունենալ, կրնաս շատ նպաստաւոր ա-մուսնութիւն մը կնքել այսինչ ոչ-քրիստոսեայ երիտասարդին հետ, միայն թէ պէտք է որ խա-չէն վար իջնես», Խաչեալ քրիստոսեան պէտք է պատասխանէ, «Ինչ որ ինծի շահ էր, գանի-կա Քրիստոսի համար փաստ սեպեցի»:

Ոմանք, աւա՛ղ, ինչպէս Դեմաս՝ կ'իջնեն խաչէն, աշխարհի պայմանը ընդունելով: Բայց գոհութիւն Աստուծոյ որ Իր եկեղեցին յաղթող կ'ընէ Քրիստոսով: Գոհութիւն Աստուծոյ որ մեզ կարող կ'ընէ, խաչէն իջնելու համար աշխարհի

այդ հրաւերին պատասխանել նոյն այն աղաղակով որ Յիսուս պատասխանեց, «Հայր, Քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս»։ Հոգ, յաղթութեան միակ պայմանը մահն է, մահ՝ Քրիստոսի մահով։ Այդպէսով Քրիստոսի հետ խաչը ելած կ'ըլլանք։

Մի՛ սիրէք աշխարհը. անիկա Քրիստոսի ոճրագործն է. անիկա Աստուծոյ թշնամին է։ Ով աշխարհ, դուն իմ Փրկիչս խաչը հանեցիր՝ եւ Անոր ամենավերջին մահացու հարուածը տուիր, ես ալ քեզ խաչը կը հանեմ Աստուծոյ դատարանով, եւ ես ալ քեզի ամենավերջին մահացու հարուածը կուտամ. հարուած մը՝ որ յաւիտենական մահ կուտայ։ «Քրիստոսի խաչովը . . . աշխարհ ինծի խաչը ելած է»։ (Քրիստոսի խաչովը) ես ալ աշխարհի (խաչը ելած եմ)։

Եթէ ես աշխարհը խաչը կը հանեմ, աշխարհ ալ զիս խաչը կը հանէ։ Քանի ես աշխարհի դէմ կը վկայեմ, աշխարհ ալ զիս կը դատապարտէ եւ խաչը կը հանէ։ Խաչը ելած մէկը դատապարտուած է։ Խաչը ելած մէկը մահուան դատապարտուած է։ Մահուան վճիռը ամենավերջին եւ ամենասոսկալի վճիռն է որ դատարան մը կ'արձակէ յանցաւորի մը հանդէպ։ Եթէ կարելի ըլլար՝ դատարանը «պատիժ մը պիտի տար ու արձակէր»։ Այդ պատիժը կրնար հինգ, տասը, քսան տարուան բանտարկութիւն ըլլալ։ Բայց ո՛չ, խաչելով մեռնելու դատապարտուած է։ Ամէն մարդ անոր վրայ կը նայի իբր մէկը՝ որուն վրայ ապրելու ալիքս ոեւէ արժանիք չէ մնացած։ Պաշտպան փաստաբանը կ'ըսէ, «Ես կրցածս ըրի, բայց չյաջողեցայ»։

Ես աշխարհի համար խաչը ելած եմ Քրիստոսով։ Աշխարհ ալիքս ինձմէ ոեւէ յոյս չունի, ոեւէ բան չսպասեր. ես ալիքս ոեւէ օգուտ չունիմ աշխարհի։ Քրիստոս խաչը ելաւ մեռնելու համար։ Մեր խաչելութիւնը Քրիստոսի հետ եղած չըլլար, քանի Անոր հետ խաչին վրայ չենք մեռած։ Ո՛հ, երբ խաչին վրայ չօրը ձեռքը կ'աւանդենք մեր հոգին՝ աշխարհ ալիքս իր յոյսը կը կտրէ մեզմէ։ Եթէ դուն իմաստուն էիր՝ անոր համար ալիքս ամենէն տխմար մարդը քեզմէ օգտակար է։ Եթէ հարուստ էիր, ալիքս մուրացկանը աւելի օգտակար է անոր քան դուն։ Եթէ բարձր ու պատուաւոր անուն ունէիր, ալիքս Բարրաբան աւելի օգտակար է իրեն քան դուն։ Ալիքս, ինչպէս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է քեզի, եւ աշխարհի ոսկին ազտեղութիւն, ու աշխարհի սէրն ու պատիւը Աստուծոյ դէմ թշնամութիւն է քու աչքերուդ՝ նոյնպէս ալ քու պատիւդ ու իմաստու-

թիւնդ եւ դրամդ (եթէ ունէիր) աշխարհի համար անպէտ ազտեղութիւն կը դառնայ։ «Ողջ շունը մեռած առիւծէն աւելի լաւ է» անոր համար։ Աշխարհ ալիքս կ'սկսի քեզ ատել։ Դուն անոր համար դիակ մըն ես ալիքս՝ եւ «մահուան հոտ դէպի մահ»։ Անիկա իր հարուածները չխընայեր քեզի, իր գեղարդով քու կողդ կը ծակէ։ Բայց ի՞նչ փոյթ, դուն մեռած ես։

Իայց ո՛հ, հրաշք աստուածային։ Մեռած վայրկեանէդ քու մէջդ կ'սկսի կեանք մը, նոր կեանքը, Քրիստոսի կեանքը։ Քու մէջդ կ'սկսի կեանքի հոտ մը, զոր ոմանք դէպի կեանք կը հրապուրէ եւ կ'առաջնորդէ։ Դէպի Քրիստոսի օրհնեալ կեանքը, աւելի կեանքը, պահուած կեանքը, յաղթական կեանքը, ճշմարիտ եւ յաւիտենական կեանքը, այս աշխարհի վրայէն սկսած եւ յաւիտենականութեան համար բղիտող կեանքը։

Յիսուս Տէր արքայ,

Գամուած խաչին վրայ.

Գամէ անձրս ալ հիմա,

Հետըդ քու խաչիդ վրայ։

Սէն Լու

Վ. Ս.

Ս. ԳՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Անուրանալի է թէ Յիսուս Պետրոսի բացառիկ դերը մը տուած է՝ բոլոր առաքեալներուն մէջ։ Բաւական է միայն յիշել հետեւեալ պարագաները՝ հաստատելու համար այդ իրողութիւնը։

1. Ձայն իբր աշակերտ ընդունած ատենն իսկ՝ ճանչցաւ զայն իբր այնպիսի անձ մը, որ կրցուած էր Աստուծոյ շնորհքով ու անօրինութեամբ իր ուսերուն վրայ կրելու եկեղեցին, ինչպէս վէմը, հիմնաքարը կը կրէ շէնքը, «Դուն կեփաս պիտի ըսուիս, որ Պետրոս (վէմ) կը թարգմանուի» ըսաւ անոր (Յովհ. Ա. 42)։

2. Ծանօթ դաւանանքէն յետոյ վերոյիշեալ խոստումը կրկնելէ զատ՝ անոր յայտնեց նաեւ, թէ Աստուծոյ Հոգւոյն ազդեցութեան տակ երկրի վրայ անոր տուած վճիռը՝ ընդունելի պիտի ըլլայ նաեւ երկինքի մէջ։ «Երկինքի թագաւորութեան բանալիները քեզի պիտի տամ, եւ ինչ որ երկրի վրայ կ'ապես, երկինքի մէջ կ'ապուած պիտի ըլլայ ու ինչ որ երկրի վրայ արձակես, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ» Մտ. ԺԶ. 17։

3. Մասնաւորաբար Պետրոսի ըսած է Տէրը, «Դուն երբ դարձի գաս, քու եղբայրներդ ալ հաստատէ» (Ղուկ. ԻԲ. 32): «Արածէ իմ գառնուկները», «Արածէ իմ ոչխարներս» (Յովհ. ԻԱ. 15-16):

Այս բոլոր համարները որոշապէս կ'ապացուցանեն թէ Յիսուս — միակ ծնողը ու Տէրը եկեղեցւոյն — Պետրոսի մասնաւոր արտօնութիւններ տուած է. ան ըլլալու էր եկեղեցւոյն ղեկավարը, հովուապետը: Առաքեալներն ու եկեղեցին շատ լաւ ճանչցան Քրիստոսի կողմէ Պետրոսի տրուած այդ հեղինակութիւնը եւ սիրայօժար ենթարկուեցան անոր: Այս կը տեսնենք շատ պարագաներու տակ: Յիսուսի համբարձումէն անմիջապէս յետոյ Պետրոսն էր որ իր շուրջը հաւաքեց Անոր 120 աշակերտները եւ ցուցուց անոնց թէ յուսահատելու չէին Յուդայի դաւաճանական արարքին համար՝ քանզի անիկա կրցաւ ընել միայն այն բանը, զոր առաջուրնէ չոգին Սուրբ Դաւիթի բերնով անոր համար ըսած էր: Պետրոսն էր նաեւ որ լեցուց աշակերտներու 12 թիւը՝ վիճակով Յուդայի տեղ ընտրել տալով Մատաթիան, որ աշակերտներուն հետ եղած էր Յովհաննէսի մկրտութենէն սկսեալ մինչեւ Յիսուսի համբարձումը եւ ուստի կըրնար վկայ ըլլալ Անոր յարութեան: Գործ. Ա. 15-26:

Դարձեալ Պետրոսն էր որ իբր բերան 12 առաքեալներուն՝ Պէնտէկոստէի առաջին օրերուն՝ կանգնեցաւ հրէաներուն առջեւ եւ վկայեց Քրիստոսի քաջարար մահը, յարութիւնն ու Մեսիայութիւնը, խարազանեց Իսրայէլի մեղքը եւ ապաշխարութեան առաջնորդեց հազարաւորներ: Ահա այդ ատեն էր երբ Քրիստոս իրմէ ընտրուած վէմին (Պետրոսի) վրայ դրաւ առաջին քարերը, որոնք կազմեցին իրմէ շինուած տունը, եկեղեցին, որուն «չպիտի յաղթեն դժոխքի դռները». ահա այդ ատեն էր, երբ Պետրոս կրցաւ շատերուն հռչակել թէ Յիսուսի ձրի շնորհքովը ներուած են իրենց մեղքերը ու երկինքի թագաւորութեան դռները բաց են իրենց համար — քանի որ իրենք ապաշխարած են սրտանց — եւ իր այս վճիռը հաստատուեցաւ նաեւ երկնից մէջ (Մատթ. ԺԶ. 18, 19), ինչպէս նաեւ այն վճիռը, որով ինքը Աստուծոյ անեղ դատաստանին յանձնեց Անանիան ու Սափիրան, որոնք կ'ուզէին եկեղեցւոյն մէջ սուտ ու կեղծիք մտցնել (Գործ. Ե. 1-11):

Սակայն իբր հովուապետ՝ Պետրոս ոչ թէ միայն հաւաքեց, երկինքի թագաւորութեան մէջ առաւ, խնամեց ու Տէրոջը խօսքով կերակրեց առաջին քրիստոնեաները, հապա նաեւ յա-

ճախ պաշտպանեց զանոնք հրէից իշխաններուն ու քահանայապետներուն առջեւ՝ իր անձը նախատինքի, ծեծի ու մահուան վտանգին ենթարկելով: Բոլոր դատական հարցերու ատեն ինքն էր Քրիստոսի ու եկեղեցւոյ փաստին պաշտպանը:

Իր մեծ հեղինակութիւնը զգալի է նաեւ այն ատեն երբ եկեղեցին ճշդելու էր իր դիրքը հեթանոսութենէ քրիստոնէութեան դարձողներու հանդէպ: Այդ պարագային ալ, Աստուած նախ զինքը պատրաստեց, իրեն մասնաւոր տեսիլքով մը ցուցուց թէ «Մարդոցմէ մէկուն պիղծ կամ անմաքուր ըսելու չէր. յետոյ զինքը առաջնորդեց Կեսարիա, հեթանոս հարիւրապետին տունը: Հոն Պետրոս իմացաւ Աստուծոյ կողմէն Կոռնելիոսի եղած յայտնութեան նկատմամբ եւ տեսաւ որ հեթանոսներուն վրայ ալ «Հոգւոյն Սրբոյ պարզելը կը լեցուէր»: Ուստի հասկցաւ որ «Աստուծոյ քով աչառութիւն չկայ», Անոր ընդունելի են այն ամէնը, որոնք Անկէ կը վախճան ու արդարութիւն կը գործեն, եւ ազադակեց, «Կրնա՞ր մէկը ջուրը արգիլել որ ասոնք չմկըրտուին, որոնք Սուրբ Հոգին ալ ընդունեցին մեզի նման: Ու հրաման ըրաւ որ Տէրոջը անունովը մկրտուին» (Գործ. Ժ.):

Եկեղեցիին համար շատ կարեւոր քայլ մըն էր Պետրոսի հասնիլը այդ տեսութեան, քանզի հրէաները հեթանոսները պիղծ կը նկատէին եւ անոնց հետ առնչութիւն չէին ընել. հրէա մը միայն այն ատեն հեթանոսի մը հետ կերակուրի կը նստէր, երբ անիկա ալ իրեն նման թլփատուած էր: Եթէ առաքեալները նոյն տեսութեան վրայ մնային, հեթանոսները կամ երբեք պիտի չընդունուէին եկեղեցւոյն մէջ եւ կամ նախ պիտի թլփատուէին, կերպով մը հրէա պիտի ըլլային: Երկու պարագային ալ քրիստոնէութիւնը պիտի վերածուէր հրէական նեղմիտ ազանդի մը:

Բայց Պետրոս Աստուծոյ ստացած նոր լուսովը առջեւ առաւ այդ հաւաւոր սխալին, եւ յարմար ատենին պաշտպան կանգնեցաւ Պօղոսի, որ կը քննադատուէր հրէամիտ քրիստոնեաներէն՝ անթլփատներ եկեղեցւոյն գոգը ընդունած ըլլալուն համար: Ցուցուց Երուսաղէմի ժողովին մէջ թէ հեթանոսներու պարանոցին վրայ թլփատութեան եւ մովսիսական օրէնքի ծանր լուծը դրնելու չէ: Ճանչցաւ Պօղոսը իբր առաքեալ Քրիստոսի եւ ընդունեց անոր միջոցաւ հեթանոսներու մէջ ծագում առած եկեղեցին իբր Քրիստոսի շնորհաց գործ: (Գործ. ԺԵ. 1-29 եւ Դադտ. Բ. 9): Պետրոսի այդ դիրքը մեծ ազդեցութիւն ունեցաւ ժողովականներու վրայ եւ առջեւն առաւ ա-

հարկու վտանգին, որ կը սպառնար երկուքի բաժնելու նորահաստատ եկեղեցին:

Այսպէս ամէն տեղ ի յայտ կուգայ թէ առաքելական դարու հաւատացեալները Պետրոսը կ'ընդունէին իբր աստուածընտիր ղեկավար եկեղեցւոյ եւ սիրայօժար կ'ենթարկուէին անոր: Բայց Պետրոս այդ հեղինակութիւնը, զոր Քրիստոսէ ընդունած էր, գործածեց ոչ թէ իր, հապա միայն Անոր փառքին եւ եկեղեցւոյ շինութեան համար: Ամէն ատեն ինքը ետ քաշուեցաւ, որպէսզի Քրիստոսը փառաւորուի: Անիկա զինքը վէճ կոչած էր, բայց ինքը եկեղեցիին Յիսուսը կը ցուցնէ իբր միակ «Կենդանի վէճ», Որու մօտենալով քրիստոնեաները պիտի շինուին իբր հոգեւոր տաճար մը, սուրբ քահանայութիւն մը՝ Յիսուս Քրիստոսի ձեռքով Աստուծոյ հաճելի հոգեւոր պատարագ մատուցանելու» (Ա. Պետ. Բ. 4, 5): Յիսուս իրեն յանձնարարած էր՝ հաստատելու իր եղբայրները, առաքեալները (Ղուկ. ԻԲ. 32) եւ հովուելու հօտը (Յովհ. ԻԱ. 15, 16), բայց ինքը ատով չհպարտանար, հապա ինքզինքը կը դնէ խոնարհաբար շարքին մէջ երէցներուն, որոնց զործն է ոչ թէ տիրել վիճակներու վրայ, հապա Աստուծոյ հօտը հովուել ու անոր օրինակ ըլլալ՝ ենթարկուելով միակ Հովուապետին, Քրիստոսի (Ա. Պետ. Ե. 1-4):

Այս խոնարհութեան ճամբայէն ընթացաւ Պետրոս ամէն ատեն. ան ինքզինքը երբեք բարձր չնկատեց իր պաշտօնակիցներէն, բնաւ չի տարուեցաւ մենատիրական դադափարներով, հապա եկեղեցին վարեց միշտ՝ համախորհուրդ միւս առաքեալներուն ու երէցներուն: Այսպէս 120 աշակերտներուն հետ խորհրդակցելով կատարեց Մատաթիայի ընտրութիւնը, Պէտրոսէն առաջի օրը տասնըմէկին հետ մէկտեղ կայնելով, վկայեց Քրիստոսի յարութիւնը: Դարձեալ անոնց ու աշակերտներուն հետ համախորհուրդ ընտրեց եօթը սարկաւագները (Դործ. 2. 1-7) եւ առաքեալներուն ու երէցներուն հետ միասին վճռեց թէ ինչ դիրք բռնելու էին հեթանոսութենէ եկեղեցւոյ գիրկը եկողներուն հանդէպ (Դործ. ԺԵ):

Դեռ կարելի է ուրիշ պարագաներ ալ յիշել, բայց ասոնք բաւական են ապացուցանելու թէ Պետրոս իբր ղեկավար եկեղեցւոյ, միշտ կը վարէր իր պաշտօնը՝ եղբայրաբար խորհրդակցելով տասնըմէկին ու աշակերտներուն հետ եւ ինքզինքը ենթարկելով ժողովներու տուած որոշումներուն: Այո՛, անիկա պատրաստ էր նոյնիսկ յանդիմանուելու, ինչպէս որ կը յայտնուի Գաղ. Բ. 11-14 համարներուն մէջ, քանզի անիկա ինք-

զինքը երբեք չէր նկատեր անմեղադրելի, անսըխալական, ինչպէս կ'ընեն այսօր իր կարծեցեալ ակթոռակալը եւ շատ մը մեծ ու փոքր հոգեւոր պաշտօնեաներ:

Ո՛չ, Պետրոս շատ հեռի էր տիրելու եւ իր անձը բարձրացնելու զգացումէն ու ձգտումէն: Անիկա Աստուծոյ իրեն տրուած հեղինակութիւնը կը գործածէր միմիայն Քրիստոսը փառաւորելու եւ Անոր մարմնոյն շինութեանը ծառայելու նպատակաւ. եւ այդ նպատակին համար միշտ ալ պատրաստ էր անարգուելու, ծեծուելու եւ մեռնելու: Լաւ սորված էր Քրիստոսի խօսքով ու օրինակով տուած հետեւեալ դասերը. — «Դուք ռաբբի մի կոչուիք, վասնզի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս եւ դուք եղբայրներ էք: Ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ, թող անիկա ձեր սպասաւորը ըլլայ, եւ ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ'ուզէ, թող անիկա ձեր ծառան ըլլայ, ինչպէս Որդին Մարդոյ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպասաւորութիւն ընելու եւ իր կեանքը շատերու համար փրկանք տալու» (Մատ. ԻԳ. 8 եւ Ի. 26-28):

Այսպէս՝ քրիստոնէութեան առաջին շրջանին եկեղեցւոյ միաբանութիւնը ապահովուած էր երկու հսկան պայմաններով: Առաջին, անիկա ունէր առաջնորդ մը, որ իր խոնարհութեամբ, ըսպասաւորող եւ եռանդուն գործունէութեամբն ու անձնուիրութեամբը օրինակ կը հանդիսանար հօտին եւ կ'ապահովէր իր պաշտօնակիցներուն ու բոլոր հաւատացեալներուն գործակցութիւնը՝ յարգելով անոնց ազատութիւնը: Երկրորդ, եկեղեցին ունէր ժողովուրդ մը, որ յօժարակամ կ'ենթարկուէր ու կը գործակցէր իր հովիւին: Եւ այդ միաբանութիւնը մին էր կարեւորագոյն ազդակներէն, որոնք ապահովեցին քրիստոնէութեան յաղթանակը:

X

Այս յօդուածաշարքը վերջացնելէ առաջ ըստիպուած ենք դիտողութիւն մըն ալ ընել՝ թիւրիմացութեան տեղ չտալու համար:

Ըսինք թէ Յիսուս եկեղեցւոյն մէջ Պետրոսի տուած է բացառիկ դիրք մը, զոր ճանչցած են նաեւ առաքեալները: Սակայն Սուրբ Գրոց մէջ չկայ ոեւէ ակնարկութիւն թէ Պետրոսի այդ հեղինակութիւնը կրնայ փոխանցուիլ ուրիշ անձի մըն ալ: Ինչպէս 12 առաքեալները մասնաւոր պաշտօն ունէին, — անոնք կանչուած էին ակառատեալ վկաներն ըլլալու Յիսուսի երկրաւոր կեանքին, մահուանը եւ յարութեանը. — եւ ինչ-

պէս անոնց այդ պաշտօնը չկրնար փոխանցուիլ ուրիշներու, նոյնպէս ալ Սուրբ Գրական չէ ընդունիլ թէ Պետրոսի տրուած հեղինակութիւնը փոխանցելի է ուրիշի մը: Յիսուս անոր տուած է բացառիկ արտօնութիւններ, քանզի պայմանները բացառիկ էին: Ուստի ընդունելով հանդերձ անոր այս բարձր հեղինակութիւնը, ընդունելով հանդերձ նաեւ թէ անիկա իր կեանքի վերջին օրերուն ծառայած է Հոռովմի մէջ, եւ հոն մարտիրոսացած, ստիպուած ենք մերժել նոյն եկեղեցւոյ այժմու անթոռակալին պահանջը՝ զինքն ընդունելու իբր Պետրոսի փոխանորդը, քանզի այդ պահանջը հիմնուած չէ Սուրբ Գրոց վրայ:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ԿԻՆՍԱԳՐԱԿԱՆ

ԿՈՄՍ ՅԻՆՑԷՆՏՈՐՓ

ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

(1739 եւ 1741-43)

Յինցէնտորֆի աշխատանքը միայն Եւրոպայի մէջ չսահմանափակուեցաւ: Դէպի Աստուծոյ Դառն ու ընկերը ունեցած ջերմ սէրը զինքը մղեց Ալլանտեան ովկիանոսէն անդին, զէպի կեդրոնական Ամերիկայի Սբ. Թովմաս կղզին, ուր տարիներէ ի վեր կ'աշխատէին Հերնհուլթի համայնքին միսիոնարները, իր հոգեւոր եղբայրները: Ասոնք արտաքինապէս անձուկ, տաժանելի ու հալածեալ վիճակ մը ունէին: Ուստի Յինցէնտորֆ ուզեց անոնց օգնութեան հասնիլ եւ քաջալերել զանոնք: Ատկէ զատ լռեցնել կ'ուզէր իր զրպարտիչ հակառակորդները, որոնք իրեն համար չարախօսելով կ'ըսէին, «Պարոն Կոմսը իր անձին կը խնայէ եւ տուն կը մնայ, բայց մտրովեան դժբաղդ գաղթականները կը զրկէ այնպիսի երկիրներ, ուր անոնք կը գոհուին մահացու կլիմային եւ ուրիշ դժուարութիւններուն ու վտանգներուն»:

Այդ օրերուն ծովային երկար ճամբորդութիւն մը արկածախնդրութեան եւ չարչարանքի նման բան մըն էր, ուղեւորը ստիպուած էր իր կեանքը վստահիլ առաքատանաւի մը, ուր ճամբորդը զրկուած էր այսօրուան շատ մը զիւրութիւններէն եւ ուր կը պակսէին շատ մը ընտիր գործիքներ, որոնք ներկայ ժամանակին մէջ մեծապէս կը դիւրացնեն նաւավարին զործը:

Այդպիսի արկածալից եւ երկար ճամբորդութենէ մը ետքը երբ Յինցէնտորֆ մօտեցաւ Սբ.

Թովմաս կղզոյն, իրեն ընկերացող եղբայրներուն հարցուց, «Ի՞նչ պիտի ընենք, եթէ մենք հոս մերիններէն մէկն ալ չգտնենք»: Անոնցմէ մին հանդարտ պատասխանեց, «Այդ պարագային մենք հոն ենք»: Յինցէնտորֆ ուրախացած բացազանչեց, «Ի՞նչ անվրդով ցեղ մըն են սա մորավիացիք»:

Երբ Ս. Թովմաս կղզին ցամաք ելան (29 Յունիւլ. 1739), իսկոյն լսեց թէ իր միսիոնարները բոլորն ալ բանտը կը պառկէին երեք ամիսէ ի վեր: Ուստի սեւամորթի մը հարցուց թէ ի՞նչ կ'ընէին քրիստոնեայ սեւամորթները առանց իրենց միսիոնարներուն: Պատասխանն եղաւ «Ոհ, անոնք կը յառաջդիմեն բարիին մէջ, անոնց մէջ մեծ արթնութիւն մը կայ. ուսուցիչներուն (միսիոնարներուն) բանտարկութիւնն ալ կը քարոզէ»:

Յինցէնտորֆ, կղզոյն տանիմարքացի կառավարիչէն բանտարկուած եղբայրներուն ազատ արձակուիլը խնդրեց. կառավարիչը անմիջապէս համակերպեցաւ եւ բանտարկեալները զրկեց սպայի մը հետ: Յինցէնտորֆ սպայի ներկայութեան համբուրեց բանտարկեալներու ձեռքերը ցուցնելու համար թէ իր աչքերուն առջեւը որքա՛ն բարձր էին այս մարդիկը, որոնք Յիսուսի անուանը համար տառապանք կրած էին: Օր մը ետքը կառավարիչը անձամբ այցելեց Յինցէնտորֆի եւ ներդուլութիւն խնդրեց անկէ միսիոնարները բանտարկած ըլլալուն համար եւ աւնոր արտօնեց սեւամորթներուն համար ժողովներ ընել:

Սեւամորթ գերիները ստիպուած էին արշալոյսէն մինչեւ մութ իրիկուն տաժանակիր աշխատանք ընել իրենց սպիտակամորթ տէրերուն համար, եւ ժողովատեղին հասնելու համար՝ անոնցմէ շատեր երկար ճամբաներ քալելու էին, ոմանք ալ երբ ժողովի երթալին, նախատինքի ու չարչարանքի կ'ենթարկուէին իրենց տէրերէն, որոնք զայրացած՝ յաճախ ժողովատեղին կը խուժէին. անպթօրէն կը ծեծէին գերիները եւ զանոնք անէծքով ու հայհոյանքով դուրս կը հանէին ժողովէն: Բայց այս ամէնը չէր սարսափեցնէր գերիները, ընդհակառակը ատով աւելի կը քաղցրանար Աւետարանը, զոր անոնք կը լըսէին ու կ'ընդունէին մեծ ուրախութիւնով: Շատեր ամէն երեկոյ կուգային միսիոնարներուն անոնցմէ ինչեւոր մը վրայով սորվելու համար, իսկ գլխաւոր պաշտամունքին՝ որ շաբաթ երեկոները տեղի կ'ունենար, եւ երբեմն մինչեւ կիրակի լոյս կը շարունակուէր, սեւամորթներու մեծ բազմութիւն մը կը խոնուէր: Եղբայրներու

և քոյրերու այդքան խուռն համախմբում մը Եւրոպայի մէջ երբեք տեսած չէր Յինցէնտորֆ, որ մեծ յուզումով կը դիտէր սեւամորթներու միամիտ ու անձնուէր հաւատքը: Անիկա ուրախ էր որ Աստուծոյ Հոգին կարճ ժամանակի մը մէջ իր միսիոնարներուն միջոցաւ այդքան կարեւոր գործ մը տեսած էր, այդքան շատ հոգիներ հեթանոսութեան կապանքներէն Քրիստոսի ազատութեանը առաջնորդած, ատով անոնք Հոգիով ազատ եւ ուրախ մարդիկ էին, թէեւ իրենց վերայ դեռ կը կրէին մարմնաւոր գերութեան շղթաները:

Երբ Յինցէնտորֆ միսիոնարներուն ու քրիստոնեայ գերիներուն այս արտաքին նեղութիւնը տեսաւ, կառավարիչին դիմեց եւ անոր ցուցուց թէ Հերնհուլթի միսիոնարները Դանիական կառավարութեան թուլտուութեամբը Սբ. Թովմաս կղզին գացած են ու գերիներուն Աւետարան կը քարոզեն: Կառավարիչը համոզուեցաւ ատոր, եւ միսիոնար Մարթինի գրաւոր արտօնութիւն տրւաւ՝ մկրտելու սեւամորթները: Այլեւս գերիները այնքան չէին հալածուեր ժողովի երթալուն համար:

Երեք շաբաթի չափ Ս. Թովմասի մէջ աւետարանելէ, միսիոնարներն ու քրիստոնեայ սեւամորթ գերիները քաջալերելէ յետոյ՝ Յինցէնտորֆ անցաւ Դանիական Ս. Ժան եւ Սանթա Քրուզ կղզիները: Հոն ալ խորախուսեց միսիոնարներն ու եղբայրները: Այցելեց նաեւ գերեզմանները այն միսիոնարներուն, որոնք Աւետարանի քարոզութեան համար իրենց կեանքը զոհած էին: Ասոնք յիշելով իր սիրտը լեցուեցաւ երկիւղածութեամբ ու երախտագիտութեամբ հանդէպ իր Փրկչին:

Քիչ ետքը նաև առաւ դէպի Եւրոպա. արեւադարձային ապառոջ կլիմայէն շատ ազդուած ուժասպառ եղած էր. մորթին վրայ գոյացած էին ուռեցքներ եւ վէրքեր. ստամոքսն ալ խանգարուած էր: Այսու հանգերձ նաւուն մէջ չզաղրեցաւ բարիք գործելէ եւ աշխատանքէ: Իր նընջատեղին տուաւ հրէա գոյգի մը, անոնց հանգիստին համար գոհեց իրենը. ամէն կիրակի կը հաւաքէր նաւորդները եւ անոնց Աստուծոյ խօսքը կը քարոզէր: Երբ անգամ մը երկու նաւագներ դաշոյն քաշած մէկմէկու վրայ յարձակեցան, ինքը նետուեցաւ անոնց մէջտեղը, դաշոյնները առաւ անոնց ձեռքերէն եւ միայն ճամբորդութեան վախճանին յանձնեց անոնց: Նաւուն մէջ զբաղած էր նաեւ գրելով: Յիշատակութեան արժանի է, «Երեմիա, Արդարութեան քարոզիչը»

կոչուած գիրքը, որուն համար մէկը ըսած է, «Փայլակի պէս լուսաւորող գիրք մըն է ան մեզի, մեղաւոր կրօնաւորներու համար»:

1759ի Յունիսի սկիզբը ցամաք ելաւ ու գընաց Գերմանիա: Հոն լուրջ հիւանդութենէ մը բռնուեցաւ եւ չորս շաբաթ անկողնոյ ծառայեց: Կը յուսար թէ Տէրը գինքը շուտով իր քով պիտի առնէր, բայց առողջացաւ: Հագիւ քէիկ մը կազդուրուած՝ սկսաւ դարձեալ եռանդուն գործունէութեան: Նոր միսիոնարներ զրկեց Հիւս. եւ Հար. Ամերիկա ու Հնդկաստան: Ծրագիր յղացաւ՝ եղբայրներ զրկելու նաեւ Մերձաւոր Արեւելք եւ հոն, մահմետական աշխարհին մէջ միսիոնարական գաղութներ հաստատելու: Ուստի պատգամաւորներ զրկեց Պօլիս, Եգիպտոս եւ Եթովպիա, այդ մասին արեւելեան եկեղեցիներու հետ խորհրդակցելու համար: Հրէաներուն համար ալ իբր միսիոնար որոշեց Սամուէլ Լիպլըքիւն անունով եղբայր մը, որ քիչ ետքը սկսաւ գործել Ամբսթերտամի հրէաներուն մէջ: Ասիկա թէև քիչ յետոյ այն համոզման եկաւ թէ Ընտրեալ ազգին դարձի ժամը դեռ չէր հնչեր, բայց եւ այնպէս իր աշխատանքը ապարդիւն ալ չանցաւ: Հրէաներէն գոնէ քանի մը պտուղ ունեցաւ. անոնց մէջ նշանաւոր է Եսթեր անունով տիկին մը, որ քրիստոնէութեան դառնալէ յետոյ հեղինակած է շատ մը գեղեցիկ հոգեւոր երգեր:

1741ին Յինցէնտորֆ անգամ մըն ալ կտրեց Ադրիանտեանը, ցամաք ելաւ Նիւ Եօքքի մէջ եւ անկէ անմիջապէս անցաւ Փէնսիլվանիոյ մայրաքաղաքը՝ Ֆիլատէլֆիա: Ասոր մօտերը Հերնհուլթէն եղբայրներ եկած էին եւ հոն եղբայրական գաղութ մը հաստատելու վրայ էին. Յինցէնտորֆ անոնց հետ նախկին ախուռի մը մէջ տօնեց 1841ի Ծնունդը, այդ տեղին անունով գաղութը կոչուեցաւ Բեթլեհեմ. ասիկա հիմա ծաղկեալ քաղաք մըն է, ուր եղբայրական միութիւնը ունի մօտաւորապէս 2000 անդամներ, եւ որ այսօր կեդրոնն է բոլոր եղբայրական միութիւններու Հիւս. Ամերիկայի մէջ: Յինցէնտորֆի թելադրութեամբ Բեթլեհեմի եղբայրական միութիւնը ձեւուեցաւ Հերնհուլթինին վրայ. անոր սկզբնական կոչումն էր ապաստան ըլլալ բոլոր հաւատացեալներուն՝ առանց յարանուանական խտրութեան: Եղբայրական համայնքներ հաստատեց նաեւ Ֆիլատէլֆիա եւ Նիւ Եօքք քաղաքներուն մէջ:

Բեթլեհեմը կը գտնուէր Ամերիկեան հնդիկներու սահմաններուն քով. ուստի Յինցէնտորֆ քանի մը անգամ ճամբորդեց դէպի անոնց եր-

կիրը, որպէսզի ծանօթանար այդ հեթանոսներու կեանքին եւ անոնց մէջի միախառնարական գործին: Արհամարհելով դժուարութիւններն ու վտանգները՝ յառաջացաւ մինչեւ խորերը. ի մէջ այլոց հանդիպեցաւ ցեղապետներուն Իրօքիզ կոչուած հզօր հնդիկ ցեղին, որ այսօրուան Նիւ Եօրք նահանգին մէջ կը բնակէր: Յինցէնտորֆ իր թարգմանին միջոցաւ իմացուց անոնց թէ ինքը իրենց կը բերէր Աստուծոյ խօսքը: Ցեղապետները հրաւիրեցին զինքը՝ իրենց երթալու եւ մեծ պատգամը տալու: Բնիկներու սովորութեան համաձայն բարեկամութիւնը կնքուեցաւ՝ մէկմէկու հետ խեցիներու շարոցներ փոխանակելով: Տասնեակ տարիներ ետքը Իրօքիզներու ցեղապետները կը յիշէին զեռ, թէ ի՞նչ խօսքեր ըսուած էին շարոցներու փոխանակութեան ատեն: Այս բարեկամական քայլը ճամբայ բացաւ որ քիչ ետք Յայսպերկըր անունով միսիոնար մը գալ ու Աւետարան քարոզէ Իրօքիզներուն:

Յինցէնտորֆ այցելեց նաեւ Մոհիքան կոչուած ցեղին, որոնցմէ ոմանք արդէն քրիստոնէութեան դարձած էին Հայնրիխ Րատլի կոչուած միսիոնարին միջոցաւ, որուն գործունէութեան կեդրոնը զիւր մըն էր: Յինցէնտորֆ զնաց այդ զիւրը եւ մի քանի օր բնակեցաւ բնիկներու մէկ խրճիթին մէջ, որ ծառի կեղեւէ շինուած էր: Նամակի մը մէջ գրած է, «Ասիկա ամենասիրուն տունն է, որուն մէջ ես երբեք բնակած եմ»: Բանդի իր միսիոնարին միջոցաւ դարձի եկած ամերիկեան Հնդիկները իր վրայ շատ լաւ տուրքաւորութիւն թողուցին: Իր զարմանքին մասնաւոր տարեկան դարձաւ համաժողովներու ատեն անոնց ցուցուցած կարգապահութիւնը ու շրջահայեցութիւնը. կը գրէ, «Անոնք կը կառավարեն այնպիսի համաժողով մը, որուն ես կը մասնակցիմ հիացումով»:

Այս միսիոնարական գործերէն զատ Յինցէնտորֆ նաեւ աւետարանեց Փէնսիլվանիոյ գերման գաղթականներու մէջ, որոնք այն ատեն կրօնապէս շատ լքուած էին:

Այսպէս մէկ տարիէն աւելի մնաց Հիւս. Ամերիկա եւ հոն բազմաթիւ օրհնութիւններու պատճառ ըլլալէն ետքը 1743ի սկիզբը դարձաւ Գերմանիա:

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ
.....

ՅԻՍՈՒՍԻ ՍԵՐԸ

Սիրելի զաւակա, դուն Յիսուսը կը սիրե՞ս: Եթէ հիմա քովս ըլլայիր՝ գիտեմ թէ անմիջապէս «Այո՛» պիտի ըսէիր: Շա՛տ, շա՛տ ուրախ եմ որ Յիսուսը կը սիրես, երանի թէ ամէն մարդէ աւելի սիրես Յիսուսը. հայրիկէդ ալ, մայրիկէդ քոյրիկէդ եւ եղբորմէդ աւելի սիրէիր Յիսուսը. նաեւ ընկերներէդ աւելի եւ զիրքերէդ աւելի՝ խաղերէդ ու խաղընկերներէդ աւելի սիրես Յիսուսը. եւ երանի թէ քանի մեծնաս, աւելի սիրես զԱյն. ու երբ երիտասարդ ըլլաս, կամ հայրիկիդ Հափ մեծ մարդ մը ըլլաս, կամ երբ ծեր ըլլաս՝ միշտ աւելի սիրես Յիսուսը:

Անգամ մը հինգ տարեկան պզտիկ աղջիկ մը նստած իր պուպրիկին հետ կը խաղար: Մայրիկը եւ ուրիշ տիկին մը սենեակին մէջ նստած կը խօսակցէին Յիսուսի սիրոյն վրայօք: Յանկարծ պզտիկը պուպրիկը մէկդի դնելով մայրիկին մօտեցաւ եւ ըսաւ՝ «Մայրիկ, ես ալ Յիսուսը կը սիրեմ», եւ սկսաւ երգել ասոր պէս երգ մը. — «Տէր Յիսուս սէր է,

Նա զիս կը սիրէ,

Փրկիչը՝ սէր է,

Նա զիս կը սիրէ»:

Մայրիկը որչա՛փ ուրախացաւ իր զաւակին այսպէս ըսելուն եւ երգելուն համար: Դուն ալ սիրելիս, եթէ գիտնայիր թէ Յիսուս քեզ որչափ շա՛տ, շատ կը սիրէ՝ դուն ալ պիտի ուզէիր զինքը այսպէս սիրել: Ուրիշ ֆրանսերէն կարճ երգ մը գիտեմ. հայերէնը ըսեմ. —

«Ես Յիսուսը կը սիրեմ,

Յիսուս ալ զիս կը սիրէ,

Երկուքս ալ զիրար կը սիրենք»:

Երանի թէ հիմա քովս ըլլայիր եւ քեզի այս պզտիկ երգին եղանակը սորվեցնէի, որպէսզի միշտ երգէիր: Բայց գոնէ բառերը լաւ մը սորվէ եւ Յիսուսի սէրը միշտ սրտիդ մէջ թող մնայ եւ աւելնայ: Անգամ մը խումբ մը մանուկներու հարցուցի թէ Աստուած որչափ շատ սիրեց մեզ: Պզտիկ մանուկ մը պատասխանեց, «Երկինքին Հափ»: Այո, սիրելի մանուկներ, Աստուած մեզ երկինքին Հափ սիրեց, եւ ասոր համար է որ Յիսուսը երկինքէն մեզի զրկեց:

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՀԸ

Սիրելի զաւակա, հիմա քեզի պիտի պատմեմ թէ Յիսուս որչափ շա՛տ, շա՛տ, շա՛տ սիրեց

X X X



քեզ: Յիսուս երկինքէն եկաւ, չարչարուեցաւ եւ քու մեղքերուդ համար մեռաւ: Գիտե՞ս թէ Յիսուսը որչափ շատ չարչարեցին: Աւետարաններուն մէջ գրուած է թէ հրէաները եւ Պիղատոսի զինուորները չարչարեցին Յիսուսը: Գիշեր ատեն բռնեցին զԱյն եւ մինչեւ վրայի օրը.—

Յիսուսի երեսը թփացին,
երեսը ծածկեցին ու բռունձքով ծեծեցին,
Ոմանք ալ ապտակ զարկին,
Աչքերը ծածկելով երեսին կը զարնէին,
Կապեցին եւ մտրակով ծեծեցին,
Հերովզէս անարգեց զԱյն,
Փուշերէ պսակ դրին գլուխը,
Եղէգով փուշերէ պսակին վրայէն գլուխը
ծեծեցին,

Ծաղր ըրին եւ վրան թփացին,
Ձեռքերը ու ոտքերը փայտին վրայ գամեցին,
Ծարուած ատենը քացախ տուին,
Աւազակներուն մէջտեղը խաչելով մեռցուցին,
Հայհոյեցին ու նախատեցին,
Խաչին վրայ կողը ծակեցին գեղարդով (սուր)
եւ կողէն արիւն ու ջուր վազեց:

Յետոյ խաչէն իջեցնելով Յիսուսի մարմինը գերեզմանի մը մէջ դրին: Անոնք կը կարծէին թէ Յիսուսի մարմինը գերեզմանին մէջ պիտի մնար: Բայց անոնք չարաչար կը սխալէին, որովհետեւ Յիսուս մահուան յաղթեց եւ Աստուած Յիսուսը գերեզմանին մէջ չթողուց:

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Սիրելի մանուկներ, ձեր մէջ պզտիկ տղայ մը կա՞յ, որուն անունը Յարութիւն է, եթէ կայ՝ կ'ուզեմ իրեն ըսել թէ ո՞վ էր այն մարդը որուն անունը առաջին անգամ Յարութիւն եղաւ: Այդ մարդը Յիսուս էր: Դուք Յիսուսի վրայօք շատ բաներ լսած էք անշուշտ, բայց թերեւս դեռ չէք գիտեր թէ Յիսուսի մէկ անունն ալ Յարութիւն եղաւ: Ինքը Յիսուս այսպէս ըսաւ, «Ես եմ Յարութիւնը ու կեանքը» (Յովհ. ԺԱ. 25): Բայց զիտէ՞ք թէ ինչ ըսել է Յարութիւն: Անգամ մը եօթը տարեկան սիրելի տղայ մը մեռաւ: Անունը Յարութիւն էր, եւ անոր մարմինը գերեզմանի ղեկէ առաջ եւ քաջատրեցի թէ ինչ ըսել է Յարութիւն: Կը զարմանա՞ք արդեօք որ գերեզմանի մը քով այդ բաները խօսեցաւ եւ: Սիրելի մանուկներ, պատճառը այն է որ Գերեզման եւ Յարութիւն բառերը միասին կ'երթան: Եւ զիտէ՞ք ինչու Յիսուսի մէկ անունն ալ Յարութիւն եղաւ. պատճառը այն է որ Յիսուս մեռնելէ և գերեզմանին մէջ թաղուելէ յետոյ՝ Աստ-

ուած Յիսուսը նորէն ողջնացուց եւ գերեզմանէն դուրս հանեց ու զԱյն երկինք իր քովը տարաւ: Եւ Յիսուս այլեւս չի մեռնիր, որովհետեւ մահուան յաղթեց եւ յաւիտեան կեանք ունի: Որքա՞ն անուշ բան է այս որ մարդ այլեւս յաւիտեան չմեռնի: Անոնք որ կը մեռնին՝ գերեզմանը կը դրուին ու հոն կը մնան: Բայց զիտէ՞ք սիրելի մանուկներ, որ երբ Յիսուս նորէն երկինքէն վար իջնէ՞ (այս անգամ փառքով ու զօրութիւնով, եւ հրեշտակներով ու փողի ձայնով), ամէն անոնք որ առաջ Յիսուսի արիւնովը լուացուած եւ յետոյ մեռած ու թաղուած էին՝ նորէն ողջ պիտի ըլլան. իրենց գերեզմաններէն դուրս պիտի ելլեն փայլուն ու փառաւոր մարմիններով՝ (Յիսուսի մարմինին պէս) եւ պիտի երթան Յիսուսի հետ ապրելու յաւիտեան: Եւ ինչպէս Յիսուս այլեւս չմեռնիր, Յիսուսի արիւնովը լուացուողներն ալ այլեւս երբեք պիտի չմեռնին՝ ու յաւիտեան ուրախ ու երջանիկ պիտի ապրին Աստուծոյ հետ, Յիսուսի հետ ու հրեշտակներուն հետ, երկինքի ոսկիէ փողոցները պարտելով՝ եւ կենաց ծառէն պիտի ուտեն և կենաց ջուրէն պիտի խմեն: Ահա սիրելի մանուկներ, ասոր համար Ձատիկը կը տօնենք, Յիսուսի յարութիւն առած ըլլալուն համար. եւ անոր համար ալ՝ որ մենք ալ օր մը յարութիւն պիտի առնենք եւ Յիսուսի քով Յիսուսի պէս պիտի ապրինք երկինքի մէջ:

Բայց անոնք որոնց մեղքերը Յիսուսի արիւնովը չեն լուացուած՝ անոնք երբ յարութիւն առնեն, դժոխք պիտի երթան եւ հոն կրակին մէջ սոսկալի պիտի չարչարուին յաւիտեան: Ուստի սիրելի զաւակս, Յիսուսէն խնդրէ որ իր արիւնովը քու մեղքերդ լուայ. նաեւ հալորիկիդ ու մայրիկիդ ալ ըսէ, նաեւ ազգականներուդ ու ընկերներուդ ալ՝ որ Յիսուսէն խնդրեն իրենց մեղքերուն թողութիւնը, եւ այսպէս ամէնդ միասին օր մը երկինք երթաք:

Ես գիտեմ թէ Յիսուս իմ մեղքերս իր արիւնովը լուացած է եւ զիս երկինք պիտի տանի: Հիմա այլեւս այս գրածս կը վերջացնեմ. զիտէ՞ք թէ երբ մարդ մը կը բաժնուի՝ երթալէ առաջ կ'ըսէ, ծոխութիւն (au revoir), ասիկա ըսել է «Մինչեւ որ նորէն տեսնուինք, մնաք բարի»: Հիմա ես ալ քեզի ըսեմ, «Մինչեւ որ նորէն տեսնուինք՝ մնաք բարի»: Բայց ո՞ւր պիտի տեսնուինք: Ես երկինքի համար կ'ըսեմ: Երանի թէ սիրելի մանուկներ, դուք ամէնդ ալ Յիսուսի արիւնովը ձեր մեղքերէն լուացուիք ու երկինք երթաք եւ հոն զիրար տեսնենք եւ ուրախանանք:

ու Յիսուսի հետ յաւիտեան ապրինք: Ուրեմն,
«Յտեսութիւն երկինքի մէջ»:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄ ՄԸ

.....

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ ԵԼԻՑ Ա. — Ի. ԳԼՈՒԽՆԵՐԷՆ

(Մանկանց՝ 15 տարեկանէն վար եղող)

- 1—Գտիր այն երեք համարները որոնց մէջ ուղղակի կամ անուղղակի Փարաւոն Մովսէսը մեռցնել կ'ուզէր:
- 2—Բ Գլխուն մէջ Աստուած ե՞րբ Իսրայէլը յիշեց:
- 3—Գ. Գլխուն մէջ Ի՞նչ է այն նշանը զոր Աստուած Մովսէսի տուաւ, «Այս ըլլայ քեզի նշան» ըսելով:
- 4—Գ. եւ ԺԺ. Գլուխներուն մէջ գտիր այն համարները ուր կ'ըսուի թէ լեռան մը վրայ կ'ըրակ կար:
- 5—Աստուած Մովսէսի եւ Ահարոնի ձեռքով քանի՞ հարուածներ զրկեց Եգիպտոսի վրայ. կարգաւ համրէ՞ գանձոնք:
- 6—Մոզերը ո՞ր հրաշքները փորձեցին ու ըրին, ո՞ր հրաշքները փորձեցին ու չկրցան, եւ ո՞ր հրաշքը իրենց մարմինին վրայ ալ եղաւ:
- 7—ԺԳ. Գլուխ: Ի՞նչ պարագայի տակ Իսրայէլի որդւոց առջեւէն զացող ամպի ու կրակի սիւնը միեւնոյն ատեն թէ՛ լոյս ըրաւ եւ թէ խաւար:
- 8—ԺԳ. Գլխուն մէջ Յովսէփի սկիորներուն մասին գրուած համարը գտիր եւ ըսէ թէ Ի՞նչ մարգարէութիւն կար անոր մէջ:
- 9—Քանի՞ անգամ Փարաւոնի սրտին խստացուելը եւ կարծրացուելը յիշուած է:
- 10—Ո՞ր գլխուն մէջ երգ մը ու տրտունջ մը կայ: Երգը ինչո՞ւ, տրտունջը ինչո՞ւ:
- 11—ԺԶ. Գլխուն մէջ մանանան Ի՞նչ ձեւ, Ի՞նչ գոյն, Ի՞նչի համ ունէր. եւ Իսրայէլի որդիները քանի՞ տարի կ'երան զայն:
- 12—Մանանան ո՞ր մէկ գիշերուան մէջ որդնտեցաւ եւ ո՞ւր տարիներ պահուեցաւ առանց որդնտուելու եւ հոսելու:
- 13—Ե՞րբ եւ ինչո՞ւ Մովսէս ամբողջ օրը իր երկու ձեռքերը վեր բռնած կեցաւ:
- 14—Ե՞րբ եւ ինչո՞ւ Իսրայէլի որդիները զրեթէ պատրաստ էին Մովսէսը քարկոծելու:
- 15—Տասնաբանեայի ո՞ր մէկ պատուիրանքին մէջ ըսուած է, «Քու օրերդ երկայն ըլլան»:

.....

Անցեալ թիւին մէջ յիշուած Օքսֆորտի շարժման մասին մեր ըսելիքները յառաջինայ թիւով:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Երիքովի աւերակներուն մէջ պեղումներ կատարող Բրոֆ. Ճօն Կարսթանկ, որուն չորրորդ հնագիտական արշաւանքն է այս Երիքովի մէջ, նոր գիւտեր ըրած է հոն, որոնք անգամ մըն ալ կուզան հաստատուելու այդ քաղաքին պաշարման ու անկումին մասին Սուրբ Գրոց ըսածներուն պատմական ճշմարտութեան:

Աւերակներուն մէջ գտնուած են պնակիտներ որոնք այդ դարաշրջանի թղթակցութիւններն են: Այդ նամակները կը պարունակեն Եգիպտոսի ուղղուած ստիպողական կոչեր, որոնցմով Եգիպտացիներէն օգնութիւն կը խնդրուի Իսրայէլացիներուն դէմ. յայտնի է որ Եգիպտացիք ուշ չի դրին այդ կոչերուն:

Արմանայի պնակիտներուն մէջ նոյն ինքն Յեսուի անունը յիշուած է: Ասիկա մեծ գիւտ մըն է, կ'ըսուի, որուն կարեւորութիւնը պէտք եղածին պէս ճանչցուած չէ տակաւին, եւ որ կոչուած է աննախընթաց խթան մը ըլլալու Երիքովի հնախոյզներուն համար:

Մութ Բահաղ Յորդանանի հովիտին ցեղապետներէն մին, կը թուի ըլլալ հեղինակը նամակին, որուն մէջ յիշուած է Յեսուի անունը. իսկ նամակը ուղղուած է Թանհամուի Պաղեստինի մէջ Եգիպտական կառավարութեան ներկայացուցիչներէն մէկուն: Մութ Բահաղ կը զրէթէ Բեւլայի թագաւորը Յոր (Իսհապ) Յորդանանու արեւելեան կողմը, իր առջեւէն փախած է, եւ եթէ չի հաւատար (Թանհամու) կրնայ հարցնել Բենիամինի, Յեսուի եւն: Կը թուի թէ այս նամակը գրած ատեն եգիպ. մեծ անձնաւորութիւններ բարեկամական զգացումներ կը անուցանէին Յեսուի հանդէպ եւ անա այս կէտին է որ աւագ կարեւորութիւն կը տրուի:

Հարկ կ'այ ըսելու թէ մենք Աստուծոյ խօսքին անսխալ ըլլալուն հաւատացողներս, ալ պեղումներու յայտնութիւններուն պէտք չունինք մեր համոզումին մէջ հաստատուելու համար: Բայց այս լուրերը կ'արձանագրենք անգամ մըն ալ վեր հանելու այն յատկանշական իրողութիւնը թէ այն ըսողը պեղումները որոնք մինչեւ հիմա կատարուած են Ս. Գրական վայրերու մէջ, ըլլայ Բաբելոն, Պաղեստին կամ Եգիպտոս, մէկ բան միայն երեւան հանած են— Աստուածաշունչի պարունակութիւններուն կատարեալ ճշգրտութիւնը:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH.

Imp. Y. ARMEN & Cie, 39, Rue St.-Savournin - Marseille

ՀԱՅ ԱՎԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարանաւաւիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷԼ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Դաւարտեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպ-
րոց մանկանց 11 Rue de l'Eclipse

Շարանաւաւիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն Ժիւլիենի, Սէնթ Անժուանի, Սէնթ Մարկրի-
թի, Սէն Ժէրոմի Պուլվար Օտօի մէջ):

Սէն Լուի.—Քարովիք Պրն. Վաֆան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Louis

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա.
16 ին քարոզածողով:

Սէնթ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՅՈՒՆ.— Քարովիք' Պրն. Ս. Պազգալեան,
14 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

Սէն Փիլի.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՕՆԹԷԼԻՒՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.—

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
Եկեղեցիին մէջ:

ԻՍՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

.....

ԼԻՐՈՆ— Հովիւ' Պատ. Ժ. Պարտաւեան,
78 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ԷՍԹԵՍՍ.—

Կիր. ժամը 10. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով Pascalի շէնքը

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆԹ ԷՅԻԻԷՆ—Քարովիք Պրն. Ի. Աքրահամեան
2. Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République.
17ին աղօթածողով
Արմէ տի. Սալիսի սրահին մէջ:

ՍԷՆ ՇԱՄՍՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

.....

ԲԱՐԻՋ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
13 Bd. du Lycée Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2^e
Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին
37 Rue Tournefort Paris 5^e
Metro Moule Aut. K.

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդաց
Քրիստոնէական Միութիւն

քանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար.

դոմիեաց Քրիստոնէական Միութիւն

քանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սբ. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով
59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulineaux.

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին սրահումնայ
Rue des Brochets, Alfortville.

ԲԱՆԲԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ.—

Ուրախ ենք որ մեր խմբագրական շարքը՝ «Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիները» լաւ ընդունելութիւն գտած է ընթերցողներու շրջանակին մէջ եւ ոմանք սկսած են հասցէ տալ կամ ձրի «Բանբեր» խնդրել: Ուրիշներ ալ մէկ տարուան բաժնեգին ղրկած են այդպիսի պարագայի մը «Բանբեր» յուղարկելու: Խմբագրութիւնս կը փափաքի այս ղիմումները անպատասխանի չթողուլ. այսու ամենայնիւ մեր բոլոր ծանր է եւ հազիւ կրնանք մեր ծախքերը գոցել «Բանբեր»ի այսքան ցած բաժնեգինովը: Սակայն եղած ղիմումներն ալ մերժել յիշաւի անգթութիւն պիտի ըլլար, ուստի հարկ սեպեցինք այսպիսի եղբայրական օգնութեան համար միշտ արթուն եղող Բանբերի սիրելի ընտանիքին ղիմել որպէսզի միասին մեր լումաները միացնելով այդպիսիներու օգնենք: Մրտադիր ենք մեզի ղիմողներէն հարիւր հատի գոհացում տալ: Ո՞վ կ'ուզէ այս կէտին մէջ մեզի ձեռնտու ըլլալ: Ո՞վ կ'ուզէ օգնել հոգեւոր բաները կարդալու բաղձանքով լեցուն հեռաքնակ հայրենակիցներու:

Զատկուան փառքերը փութով ապսպրեցէք: